Ազգ

AZG
armenian newspaper

Օգոստոս 6
1992
Հինգշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 68 (160)
գինը՝ 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPRI SU

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ-Արմ.ՍՍՌ
Մ. Մաշտոցի անվ. Ձեռագրերի ինստիտուտ

Երկու նոր նահանգ Թուրքիայում

Անկարա, 5 օգոստոսի, ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Թուրքիայի ներքին գործերի նախարար Իսմեթ Սեզգինը ընդունել է երկու նոր շրջանների՝ Արդահանի եւ Իգդիրի նահանգապետերին:

Նահանգները կազմավորվել են երկրի հյուսիս-արեւելքում, Անդրկովկասի պետությունների հետ սահմանամերձ շրջաններում: Նա ասել է, թե այդ նահանգները կամուրջ կհանդիսանան ԱՊՀ երկրների, Վրաստանի, Միջին Ասիայի եւ Թուրքիայի միջեւ: Նահանգների վարչական ղեկավարներ են նշանակվել Էրդողան Իզգյուն (Արդահան) եւ Յեներ Ուլուերը (Իգդիր): Այժմ Թուրքիայում հաշվվում է 78 նահանգ: ■

Ուրուգվայը կճանաչի՞ ԼՂՀ-ը

Հավանական է, որ մոտ ժամանակներս Ուրուգվայը ճանաչի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այդ մասին օգոստոսի 4-ին Երեւանում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց ԼՂՀ խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանը, որը վերադարձել էր Ուրուգվայ եւ Ֆրանսիա կատարած այցելությունից: Նրա խոսքերով, Ֆրանսիա կատարած իր այցի ժամանակ Եւրախորհրդարանի ղեկավարության հետ ոգեւորվածություն է ձեռք բերվել, որ այդ կազմակերպությունում Ղարաբաղյան հիմնահարցի բոլոր ճնշարկումներին պետք է մասնակցեն ԼՂՀ ներկայացուցիչները:

Լ. Մելիք-Շահնազարյանը հաղորդեց նաեւ, որ Ֆրանսիայի եւ Ուրուգվայի հայկական համայնքները համապատասխանաբար հավաքել են 38 եւ 30 հազար դոլար: Այդ հանգանակությունը հանձնվել է ԼՂՀ կառավարությանը: ■

Վարչապետն ընդունեց իտալացի գործընկերներին

Ինչպես հաղորդում է Հայաստանի կառավարության լրատվական ծառայությունը, երեկ, օգոստոսի 5-ին ՀՀ վարչապետ Խոսրով Հարությունյանն ընդունեց իտալական «ՕՖմա» ֆիրմայի նախագահ Ռիկարդո Կալիգարոյին եւ «Անտոնիանա» բանկի կառավարիչ Ջանմարկո Զանկետային:

Վարչապետը երախտագիտություն հայտնեց Իտալիայի կառավարության եւ ժողովրդի օգնության մասին, որը ցույց է տվում աղետի գոտուն:

«ՕՖմա» ֆիրմայի նախագահը հայտնեց, որ աղետի գոտու վերականգնմանը աջակցելու նպատակով Իտալիայում հանգանակված միջոցներով Սպիտակում կառուցվող անասնաբուժական համալիրի շինարարական աշխատանքներն ընթանում են եւ ըստ ծրագրի կավարտվեն եկող գարնանը: Սակայն, ավելացրեց նա, իրենց այցի հիմնական նպատակներից մեկը գործնական կապերի ընդլայնման խնդրի քննարկումն է, եւ այս առումով Հայաստանի կառավարության նախագահի շահագրգիռ տրամադրվածությունը հաջողության հասնելու երաշխիքներից մեկն է:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց միջոցառումների առեւտրատնտեսական հարաբերությունների հաստատման ուղղությամբ աշխատանքներ սկսելու վերաբերյալ, քննարկվեցին համագործակցության հնարավոր ոլորտները: Ըստ առաջնահերթության, նշվեցին էներգետիկան (փոքր հիդրոկայաններ), գյուղատնտեսությունը մեքենայացումը (փոքր հզորության տրակտորներ եւ այլ մեքենաներ), սննդաղյուսաբերությունը (հացաթխում, հյութերի ու փաթեթավորման արտադրություն եւ այլն): Կողմերը պայմանավորվեցին առաջիկա երկու ամսում ծրագրեր մշակել այն ոլորտների ու հարցերի վերաբերյալ, որոնք քննարկվեցին հանդիպման ընթացքում, եւ դրանից հետո համատեղ ընտրել առավել հաջողվածները: ■

Կատաղի մարտեր Արծվաշենի մատույցներում

Հնարավոր չէ կանանց եւ երեխաներին դուրս հանել

Ինչպես հաղորդեց «Սնարք» գործակալությունը, մարտեր են տեղի ունենում Արծվաշեն գյուղի համար: Ադրբեջանական ջոկատները շրջափակելով միակ ճանապարհը, որը կապում է գյուղը Հայաստանի հետ, վերջին մի քանի օրերի ընթացքում ուժգին հրետակոծման են ենթարկել Արծվաշենը: Միաժամանակ հրետակոծվում էր Կրասնոսելսկ շրջկենտրոնը: Վիրավորվել են 27 մարդ: Ոչ մի հնարավորություն չկա գյուղից դուրս հանել կանանց եւ երեխաներին: Մոտակա ադրբեջանական գյուղերում նկատվում են տանկերի, հրետանու, կենդանի ուժի կուտակումներ:

Երեկ առավոտյան վերսկսվեց գյուղի հրետակոծումը: Ինքնաաշտպանության հայկական ուժերն անցել են ակտիվ գործողությունների, լոգիստիկելով թշնամու կրակակետերը: Հայաստանի պաշտպանության նախարարության նախնական տվյալներով, խփվել են երկու զրահամեքենա եւ մեկ «Գրադ» կայանք: Ադրբեջանցիները կրել են նաեւ մարդկային ուժի զգալի կորուստներ:

Իր հերթին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հաղորդեց, թե օգոստոսի 5-ին, առավոտյան հրետակոծումից հետո հայկական բանակի ստորաբաժանումներ, խախտելով սահմանը, հարձակվել են Գետաբեկի շրջանի մի շարք գյուղերի վրա: Ինքնաաշտպանության ադրբեջանական ուժերին հաջողվել է հետ մղել հարձակումը եւ լոգիստիկել մի շարք կրակակետեր: Ադրբեջանական կողմից զոհվել են երկու եւ վիրավորվել նույնքան երկու մարդ: Հայկական կողմը կորցրել է մեկ տանկ, մեկ զրահամեքենա, տասնյակ հայեր սպանվել եւ վիրավորվել են: ■

Ռուսաստանը ցանկանում է Ղարաբաղ ուղարկել խաղաղարար ուժեր

Անդրեյ Կոզիրեւն ընդունեց Ռաֆֆի Հովհաննիսյանին

Ինչպես հաղորդեց Հայաստանի արտգործնախարարության մամուլի կենտրոնի ղեկավար Գառնիկ Բաղալյանը, օգոստոսի 4-ի երեկոյան Հունգարիայից վերադարձի ճանապարհին ՀՀ արտգործնախարար Ռ. Հովհաննիսյանը Ռուսաստանի Դաշնությունում Հունգարիայի դեսպանի հրավերով այցելել է Մոսկվայում Հունգարիայի դեսպանություն, որ նրա պաշտոնական ընթրիք է տրվել:

Օգոստոսի 5-ին Ռաֆֆի Հովհաննիսյանին պաշտոնական ճաշի է հրավիրել Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը: Կայացած հանդիպման ընթացքում երկու երկրների արտգործնախարարները քննարկել են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանն ուղղված երկկողմ պայմանագրերի ստորագրմանն առնչվող մի շարք հարցեր: Հանդիպումից հետո Անդրեյ Կոզիրեւը հայտարարել է, թե հիմնականում քննարկվել են զինադադարի հետ կապված խնդիրները եւ չի բացառվում, որ այդ առթիվ կընդգրկվեն խաղաղարար ուժեր ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի եւ ԱՊՀ-ի շրջանակներից: Կոզիրեւն ավելի իրատես է համարել այն տարբերակը, ըստ որի Ռուսաստանը որպես կոնֆլիկտի կարգավորման միջնորդ ՄԱԿ-ի հովանու տակ Ղարաբաղ կուղարկի իր զինված ուժերը:

Մինչդեռ, ըստ «ԻՏՆ»-ի, Ռուսաստանի արտգործնախարարությունը մտադիր է օգոստոսի 7-ին Մոսկվայում անցկացնել Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ներկայացուցիչների ոչ պաշտոնական հանդիպում Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման շուրջ: Ըստ ռուսական կողմի այդ հանդիպման, հաջողությունը ճանապարհ կբացի, որպեսզի մոտ օրերս Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքվի կոնֆլիկտի շրջանում կրակի դադարեցման մասին համաձայնագիր: Ռուսաստանը առաջարկում է համաձայնագիրը ստորագրել հարավ-ռուսական քաղաքներից մեկում, օրինակ, Կրասնոդարում, որը, ըստ երեւույթին, ուժի մեջ կմտնի օգոստոսի 9-ին: ■

Ադրբեջանը հույսը դնում է ԵԱՀԽ-ի վրա

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Թոֆիկ Ղասիմովը հայտարարեց, որ հանրապետությունն առաջվա պես առաջնությունը տալիս է Ղարաբաղյան հիմնահարցի լուծման ԵԱՀԽ-ի ջանքերին: «ԻՏՆ»-ին տված հարցազրույցում նախարարը նշեց, որ մինչեւ չընդունվի Հռոմի հանդիպման վերջնական փաստաթուղթը, Մինսկի խորհրդաժողովի հեռանկարների մասին խոսելը վաղաժամ է: ■

Լաչինի միջանցքը կրակի տակ է

Ըստ «Սնարք»-ի, օգոստոսի լույս 5-ի գիշերը եւ առավոտյան ուժգին հրետակոծման է ենթարկվել Լաչինի մարդասիրական միջանցքը: Զոհվել է մեկ մարդ, երեքը՝ վիրավորվել: Վերջին ժամանակներս ադրբեջանական զինված կազմավորումները կտրուկ ակտիվացրել են մարտական գործողությունները Լաչինի շրջանում: Գորիսի շրջանից ստացած հաղորդագրության համաձայն, քայլեր են ձեռնարկվում թշնամու կրակակետերը լոգիստիկելու համար: ■

Վերսկսվեց հայկական ուժերի հակահարձակումը

Օգոստոսի 5-ի առավոտյան, երկու օրերի համեմատական խաղաղությունից հետո վերսկսվեցին մարտական գործողությունները Լեռնային Ղարաբաղի հյուսիսում: Հայկական ջոկատները փորձում են դուրս շպրտել ադրբեջանական զինված կազմավորումները Մարտակերտից եւ Մատաղիս գյուղից: Օգոստոսի 4-ին Ֆիզուլիի շրջանի կողմից ուժգին հրետակոծման է ենթարկվել Հադրութ շրջկենտրոնը: Կան ավերածություններ: ■

Վերականգնվեց Հայաստան-Արցախ փոստային կապը

Սիսիանի կապի հանգույցի միջոցով երեկ վերսկսվեցին Հայաստանի փոստային առնչությունները Արցախ՝ Երեւան-Ստեփանակերտ-Երեւան ուղղությամբ: ■

Համակենտրոնացման ճամբարներ Սերբիայում

Մ. Նահանգների պետքարտուղարության բանբեր Ռիչարդ Բուչերի հաղորդմամբ, սերբերը համակենտրոնացման ճամբարներ են հաստատել Հարավսլավիայի տարբեր շրջաններում, դրանցում կենտրոնացնելով գերի վերցված խորվաթներին եւ բոսնիացի իսլամներին: Բանբերը հայտարարեց, թե կալանավորների նկատմամբ հաճախ են կիրառվում տանջանքի մեթոդներ: Տանջամահության բազմաթիվ դեպքեր կան:

Այս կողմից, միջազգային կարմիր խաչը ճնշաղատեց Հարավսլավիայում հակառակորդ բոլոր կողմերին մարդու իրավունքները ոտնահարելու եւ իրար նկատմամբ թշնիկական հողի վրա խժդժություններ գործադրելու համար: Իր հերթին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պահանջեց անկախ դիտորդների առաջ բանալ Բոսնիայում գտնվող բանտերը: Ինչ վերաբերվում է Սարաեւոյին, վերջին օրերի սաստիկ բախումներն ստիպեցին ՄԱԿ-ի զորքերին եռօրյա ժամկետով փակել օդակայանը, որտեղից մարդասիրական օգնություն էր հասնում ազգաբնակչությանը: Երեքշաբթի օրը քաղաքի վրա տեղացած բազմաթիվ ռումբերից մի քանիսն ընկան գերեզմանատան վրա, որտեղ այդ պահին ազգականները հողին էին հանձնում այն երկու որբերի մարմինները, որոնց խորվաթիա տեղափոխող ավտոբուսը 48 ուրիշ որբերի հետ սերբերի լարած թակարդն էր ընկել: Սերբերը նույն ավտոբուսից առեւանգել էին 9 երեխաների, մինչ մնացյալ 39-ը հասել էին Խորվաթիա: ■

Ամերիկյան դեսանտայիններ Քուվեյթում

Ամերիկյան բանակի 1900 ծովային ներ երեկ դեսանտ կատարեցին Քուվեյթի ծովափնյա շրջաններում, Մ. Նահանգներ-Քուվեյթ միացյալ ռազմափորձերի ծիրից ներս, որն ընդգրկելու է շուրջ 20 հազար ամերիկյան բանակայիններ: Միացյալ ռազմափորձերը խստորեն քննադատվեցին Իրաքի եւ Իրանի կողմից: Դրանք վախ պատճառեցին նաեւ բազմաթիվ քուվեյթցիների: Այս կողմից, չորեքշաբթի օրը Բաղդադի փողոցներից մեկում քարկոծվեց ՄԱԿ-ի քննիչներ տեղափոխող ավտոբուսը: ■

Գերմանիան ոչնչացնում է զենքերը

1990 թ. կնքված եւրոպայում սովորական զենքերի կրճատման պայմանագրի առաջին գործադրողը դարձավ Գերմանիան, երբ սկսեց ոչնչացնել իր հրապարակների եւ այլ ծանր զենքերի մի մասը: Այս կողմից, Ֆրանսիան դարձավ միջուկային զենք ունեցող վերջին երկիրը, որ համաձայնեց ստորագրել այդ բնագավառում զարգացման նոր հեռանկարներ չկապարելու մասին միջազգային պայմանագիրը: ■

Միջուկային զենքի մորատորիում Սենատի որոշմամբ

Ամերիկյան Սենատը որոշեց ինքնասպա մորատորիում հաստատել միջուկային զենքի փորձարկման բնագավառում եւ 1996 թ. սեպտեմբերի 30-ից սկսած ընդհանրապես դադարեցնել միջուկային բոլոր տեսակի զենքերի փորձարկումները: ■

Թուրքիան շրջափակում է Հայաստան տեղափոխվող մարդասիրական օգնությունը

Ամերիկյան ռազմական մի օդանավ, որը բժշկական սարքավորումներ էր տեղափոխում Հայաստան, մերժեց օդանավը խուզարկելու Թուրքիայի պահանջը եւ այժմ աղասում է, մինչեւ որ Թուրքիային շրջանցելու մի այլ ճանապարհ գտնի:

Թուրքիան հայտարարել է, թե Հայաստան եւ Ադրբեջան բեռներ տեղափոխող եւ Թուրքիայի օդային սահմաններն օգտագործող բոլոր օդանավերը ենթարկվելու են սովորական խուզարկության:

«Վաշինգտոն թայմս» թերթը, որն իր օգոստոսի 4-ի համարում անդրադարձել է այս հարցին, գրում է, որ *«Հակառակ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի ռազմական սերտ կապերին, ինչպես նաեւ ամերիկացիների այն հավաստիացումներին, որ Galaxy C5-A ռազմական օդանավը միայն բժշկական սարքավորումներ եւ դեղորայք է տեղափոխում, թուրքերը այդուհանդերձ մերժեցին բացառություն անել եւ առանց խուզարկության թույլ տալ օդանավին անցնել թուրքական օդային սահմանները: Հայկական աղբյուրները Վաշինգտոնում պնդում են, որ դրա պատճառը Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ավանդական թշնամանքն է: Հսկա օդանավը, չցանկանալով Անկարայի «Էսենբոգա» օդանավակայանում ծգծգվող խուզարկության ենթարկվել, Ֆրանկֆուրտում է մնալու մինչեւ օգոստոսի 7-ը:*

Հայկական բարեգործական ընդհանուր միության բանբերը, որի կազմակերպության նվիրած 1,5 միլիոն դոլարի արժողությամբ բժշկական սարքավորումները գտնվում են այդ օդանավում, հայտարարեց. «Դժվար է հասկանալ, թե ինչպես կարելի է չհարգել մարդասիրական օգնություն տեղափոխող ամերիկյան ռազմական օդանավը»:

Մեր կողմից ավելացնենք, որ ՀԲԸ Միության կողմից առաքված սարքավորումները, ավելի քան 1,5 միլիոն դոլար արժողությամբ եւ շուրջ 30 տոննա քաշով, նախատեսված են Երեւանի նուրբ վիրաբուժության ինստիտուտում գտնվող ՀԲԸՄ-ի ղլուխի վերականգնողական կենտրոնին, իսկ նույնքան քաշ ունեցող դեղորայքը նվեր է Project hope եւ Map International ամերիկյան կազմակերպությունների կողմից, Հայկական միացյալ Ֆոնդի միջոցով:

Իր հերթին, երեկ ՀԲԸ Միության Երեւանի ներկայացուցչական գրասենյակից մեզ հաղորդեցին, որ օդանավը արդեն դուրս է եկել Միացյալ Նահանգներից եւ Եւրոպայի գծով վաղը կհասնի Երեւան: ■

digitised by A.R.A.R.@

Գերմանիան մտահոգված է Ղարաբաղի խնդրով, բայց առայժմ չի կարող ազդել Թուրքիայի վրա

Օգոստոսի 4-ին Երեւանի կառավարական հյուրասանը տեղի ունեցավ մամուլի ասուլիս: Մասնակցում էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից օր առաջ վերադարձած Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոկսը եւ նրան ընկերակցող «Քրիստոնեական համերաշխություն» միջազգային կազմակերպության անդամները: Պատվիրակության կազմում էին Դավիթ Արինսոնը (Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի անդամ, չմիացած երկրների Եւրոպայի կոմիտեի նախագահ), Մարգոթ Ֆոն Ռենեսան (Գերմանիայի Բունդեսագ), Քերոլայն Քրոֆթը (Ամերիկայի մարդու իրավունքների Ֆոնդ), Ալեքսանդ Գոլդինը (Անդրեյ Սախարովի Ֆոնդ), Կլաուդիա Ֆյուրը («Քրիստոնեական համերաշխության» միջազգային կազմակերպություն, Շվեյցարիա):

Մարգոթ Ֆոն Ռենեսա

Լեդի Քոկսը հայտնեց, թե օգոստոսի 3-ին իրենց խումբը եղել է նաեւ Մեղրիում, որպեսզի ճնարկի Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ մարդասիրական միջանցք բացելու հարցը, սակայն նրանք եկել են այն եզրակացության, որ դա բացառվում է, քանզի այդ միջանցքը նախ Հայաստանը կանջատի Իրանից, այնուհետեւ կկանգնի 75 հազար մարդկանց տեղափոխման խնդրի առջեւ եւ կզրկվի իր բնական պաշարներից:

Այդ առթիվ, ինչպես տիկին Քոկսը, այնպես էլ պատվիրակության մյուս անդամները խոսեցին Գոբլի ծրագրի մասին, նշելով, որ այն իրոք տեղ է գտել իրենց կառավարությունների առաջարկած տարբերակների մեջ, իսկ գերմանական Բունդեսագում առաջարկել են Ղարաբաղ-Հայաստան եւ Ադրբեջան-Նախիջեւան ճանապարհի տարբերակը:

Քոկսը ավելացրեց նաեւ, որ նման օգնություն Ադրբեջանին ցույց չի տրվի, որովհետեւ նա ագրեսիվ պատերազմ է վարում Ղարաբաղի դեմ:

Նշվեց նաեւ, թե տիկին Ֆոն Ռենեսան պետք է որոշակի աշխատանք տանի, որպեսզի Գերմանիան ավելացնի իր ճնշումը Թուրքիայի վրա, ստիպելով վերջինիս հանդես գալ որպես խաղաղարար ուժ:

Բացելով այս հարցի շրջանակները, տիկին Ռենեսան մեզ ծանոթացրեց Գերմանիայի կառավարության դիրքորոշման հետ, ասելով, թե *«Գերմանիան Եւրոպայում երեւի միակ երկիրն է, որը ազգային փոքրամասնությունների հետ կապված խնդիրներ չունի: Այսինքն, չկան ազգեր, որոնք ցանկանում են Գերմանիայից դուրս գալ: Այդ իմաստով, մենք ավելի մեծ ազատություն ունենք Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ համակրանք տածելու հարցում, մանավանդ, որ մեր Ֆեդերացիայում մենք ընդունեցինք ազգերի ինքնորոշման սկզբունքը: Բայց, մյուս կողմից, մենք խիստ մտահոգված ենք նախկին Խ. Միությունում տարածված ազգային-էթնիկական խնդիրներով: Եւ քանի որ Արեւելյան Եւրոպան մեր ամենամոտիկ հարեւանն է, մենք ամեն ջանք պետք է գործադրենք այնտեղ խաղաղություն մտցնելու եւ պահպանելու ուղղությամբ: Նշեմ նաեւ, որ ԵԱՀԽ-ի երկրորդ սկզբունքը սահմանների անձեռնմխելիությունը մեզ համար նույնպես շատ կարեւոր է: Բացի դրանից, Գերմանիան Թուրքիայի պատմական դաշնակիցն է, թեեւ դա չի նշանակում, թե Գերմանիան ինքնաստաբար չի մոտենում Թուրքիայի հաղթականությանը: Հատկապես Թուրքիայում ազգային փոքրամասնությունների նկատմամբ տարվող հաղթականությունը մեծ համակրանք չի ներշնչում: Մենք գտնում ենք, որ այդ բախումը Անդրկովկասում հույժ կարեւոր նշանակություն ունի ոչ միայն շրջանի երկրների, այլեւ հարեւան Թուրքիայի եւ Իրանի համար: Գերմանիան դեռեւս չի հասակեցրել իր դիրքորոշումը Ղարաբաղի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության նկատմամբ: Բայց մենք նկատում ենք, որ ներկայումս Թուրքիան ամեն ջանք գործադրում է, որպեսզի շրջանում դառնա գերտերություն եւ ստանձնի նախկին Խ. Միության դերը: Այնպես որ, Թուրքիայի գալիք հզորությունը մեր կողմից նկատի է առնվում: Հուսով ենք, եւ ամեն ինչ կանենք, որպեսզի հաղթակրթության, ժողովրդավարության, մարդու իրավունքների բոլոր սկզբունքները, որոնք ընդունված են Արեւմտյան հասարակության մեջ, վերանայվեն եւ բարելավվեն Թուրքիայում: Գերմանիան երբեք պատերազմների կողմ չէ եւ այդ պատճառով ինձ համար դժվար կլինի այնտեղ բացատրել, թե ինչո՞ւ է Ղարաբաղում տարվող պատերազմը ինքնապաշտպանական: Իմ տեսակետից, այդ պատերազմը չի կարող երկար շարունակվել: Ես համոզված եմ նաեւ, որ այդ բախման լուծումը չի կարող լինել ոչ ռազմական, ոչ ադրոտիկ, այլ խաղաղական»:*

Իմ այն հարցին, թե ինչպե՞ս է տիկին Ռենեսան պատկերացնում Գերմանիայի կողմից Թուրքիայի վրա գործադրվող ճնշումը եւ ի՞նչ ձեւերով պետք է տարվի այդ ազդեցությունը, նա պատասխանեց. *«Ես արդեն նշեցի, որ մեր պետությունները պատմականորեն կապված են: Բացի դրանից Գերմանիայում բնակվում են մոտ 5 մլն. թուրք (ըստ մեր տվյալների, այս թիվը խիստ չափազանցված է.- խմբ): Նրանք աղում եւ աշխատում են մեզ մոտ: Այնպես որ, մեր կապերը շատ սերտ են: Ես չեմ կարծում, որ Գերմանիան կարող է մեծ ճնշում գործադրել Թուրքիայի վրա, մանավանդ, որ մեր երկու պետություններն էլ Ամերիկայի Միացյալ Նահանգներին դաշնակից են: Ներկայումս ԱՄՆ-ը Թուրքիայում ունի իր մեծ խնդիրները կապված Իրանի խնդրի հետ: Իմ կարծիքով, Թուրքիայի ազդեցության տարածումն այդ շրջանում դժվար է կանխել:*

Մենք կարող ենք միայն դայման ներկայացնել: Թուրքիան ցանկանում է ճանաչվել որպես արեւմտյան երկիր: Նա ուզում է մտնել հաղթակիրք, ժողովրդավար երկրների շարք: Եւ տարօրինակ է, երբ Արեւմուտքը Թուրքիային դայմաններ չի ներկայացնում շրջանում հզորության հասնելու նրա ձգտումների համար: Ես կարծում եմ, որ Արեւմտյան երկրները կկարողանային ինչ-որ ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Այստեղով, չնայած Թուրքիայի հետ ունեցած մեր լավ հարաբերություններին, մենք հնարավորություն ունենք բանակցելու Թուրքիայի հետ մարդու իրավունքները պատանելու ուղղությամբ: Եւ կարեւոր է, որ Թուրքիան ինքը հանդիսանա կայունացնող գործոն ու խաղաղարար ուժ: Այդ ժամանակ նա կարող է աջակցություն ստանալ Արեւմուտքից: Իսկ այդ աջակցության կարիքը նա ունի»:

ՀԱԿՈԲ ՍՍԱՏՐՅԱՆ

«Զոհերն իզուր չեն եղել»

Պ. Հայրիկյանը ԱԻՄ-ի 24 աշխարհազորայինների կորստի հիմնական մեղավոր է համարում ՀՀ պաշտպանության նախարարին

Օգոստոսի 4-ին ԱԻՄ-ի հրավիրած մամուլի ասուլիսը նվիրված էր Ղոչազ գյուղի մոտ տեղի ունեցած ողբերգական դեպքերի լուսաբանմանը:

Ինչպես տեղեկացրեց Պ. Հայրիկյանը, Լաչինի միջանցքը բացելուց հետո ԱԻՄ-ի խորհրդարանը այդ ընթացքում ռազմականացված բնակավայրեր ուղեւորելու որոշում է կայացրել: Այդ մասին տեղյակ է պահվել հանրապետության իշխանություններին, բայց վերջիններս, ելնելով քաղաքական նկատառումներից, որոշել են ձեռնպահ մնալ: Նման պայմաններում Ազգային ինքնորոշում միավորումը, պատասխանատվությունն իր վրա վերցնելով, ձեռնարկել է սեփական նախաձեռնության իրագործումը: Դեպքերին նախորդած օրերին բնակեցված են եղել վեց բնակավայրեր, որոնցից երեքում ապրում էին նաեւ խաղաղ բնակիչներ՝ հիմնականում Արցախի փախստականներից:

Գործերը հաջող էին ընթանում, սակայն անհանգստացնող էր բնակավայրերի անպաշտպանությունը: Տարածքում զինված ուժերի ավելացման, սահմանների ամրացման խնդրանքներին, ըստ Պ. Հայրիկյանի, պաշտպանության նախարարը պատասխանել է, թե մտահոգվելու կարիք չկա: Տարածքը հսկվում է պետական զինված ուժերի կողմից: Բայց ինչպես պարզվել է հետագայում, նախարարության ուղարկած զինված ջոկատը փախուստի է դիմել:

Մամուլի ասուլիսը վարողի կարծիքով, ադրբեջանական 200 հոգանոց զինյալ ջոկատի հիմնական նպատակը Գորիս-Լաչին մայրուղին է եղել, որը գործնականում պաշտպանված չէ: Եւ հայտնի չէ, թե ինչեր կկատարվեին, եթե այդ խմբի ճանապարհին չհայտնվեին Ղոչազ գյուղում առօրյա գործերով զբաղված 36 հայորդիներ: Հակառակ դեպքում, ադրբեջանցիները կշարունակեին իրենց առաջընթացը, իսկ հաջորդ բնակավայրը Սուս գյուղն էր, դրանից մի փոքր այն կողմ նորաստեղծ Սիսավանը:

Հաջորդ օրը ԱԻՄ-ի մյուս աշխարհազորայինները Տեղ գյուղի զինված ջոկատի հետ միասին, որոշում են մարտի վայրից դուրս հանել իրենց ընկերների դիակները: Ցավոք, այդ գործողության ժամանակ եւս կորուստներ են լինում, երկուսը զոհվում են, երեքը անհայտ կորչում:

Հայրիկյանի կարծիքով, կատարվածի *«հիմնական մեղավորը ՀՀ պաշտպանության ստախոս, անպատասխանատու, ապաշնորհ նախարարն է, որին պետք է հեռացնել»:*

Այս առթիվ մենք որոշեցինք լսել նաեւ պաշտպանության նախարարի մեկնաբանությունը:

Նախարար Վազգեն Սարգսյանը տեղում չէր: Եւ մեր խնդրանքին արձագանքեց պաշտպանության նախարարության լրատվական ծառայության պետ Գեղամ Հարությունյանը. *«Լաչինի շրջանում ԱԻՄ-ի ջոկատները դեպքի օրը գործել են ինքնակամ եւ իրենց գործողությունները չեն համաձայնեցրել այդ տարածքում ընդհանուր զինվորական հրամանատարությունը իրականացնող ղեկավարության հետ: Այնինչ նրանց եւ այդ տարածքում գտնվող բոլոր մարդկանց տեղյակ է պահվել, որ այդ շրջանում զինված բանդաներ են վխտում:*

Ինչ վերաբերվում է Ղոչազ գյուղում տեղի ունեցած դեպքերին, առայժմ մեր տվյալներով ադրբեջանցիներն ամենեին էլ 200 հոգի չեն եղել, այլ շատ ավելի քիչ: Պարզապես նրանք անակնկալ են հարձակվել:

Ճիշտ չէ նաեւ, որ Գորիս-Լաչին ճանապարհը անպաշտպան է: Եւ պաշտպանության նախարարության այդ շրջանում գտնվող ջոկատն էլ փախուստի չի դիմել, այլ առաջին գծից նահանջել է ավելի նպաստավոր երկրորդ գիծ:

Հայրիկյանի նման հայտարարությունները պարզապես կատարվածի համար պատասխանատվությունը ուրիշների վրա բարդելու միտում ունի»:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Դիրքային մարտերը շարունակվում են

Բաքվից եւ Ստեփանակերտից ստացված հաղորդագրության համաձայն, օգոստոսի 3-4-ին իրավիճակը Լեռնային Ղարաբաղում արմատապես չի փոխվել: Կողմերը հաղորդեցին Մարտակերտի շրջանում շարունակվող մարտերի եւ բնակավայրերի հրետակոծումների մասին:

Ադրբեջանի պաշտպանության նախարարության տվյալներով, ադրբեջանցիների կողմից վերահսկվող Մարտակերտ շրջկենտրոնի մատույցներում տեղի ունեցող մարտերում խրփվել է հայկական զինված կազմավորումներին պատկանող 2 միավոր զրահատեխնիկա, ոչնչացվել են զենիթային եւ հրետանային կայանքներ: Ադրբեջանական կողմի կորուստներն են 9 սպանված, 12 վիրավոր: Նախարարությունը հաղորդեց նաեւ, որ հրետակոծվել են ԼՂՀ եւ Հայաստանի հետ սահմանամերձ ադրբեջանական բնակավայրերը: Աբնվազն 3 հոգի զոհվել է, 16-ը վիրավորվել: Ադրբեջանական կողմը հերքեց հայկական աղբյուրների հաղորդագրությունը, թե հայերը օգոստոսի 2-ին գրավել են Չարեքտար եւ Աղդարան գյուղերը:

Մինչդեռ, Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը հաղորդեց, թե ադրբեջանցիները հրետակոծել են Մարտունին, Հադրութը եւ մոտակա գյուղերը: Վիրավորվել է մեկ մարդ: Հայաստանի ՆԳՆ տվյալներով, հրետակոծվել են նաեւ Ադրբեջանի հետ սահմանամերձ մի շարք գյուղեր: Կան վիրավորներ: ■

Կարեւորը ռազմական հարցերն են

Օգոստոսի 3-ին Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիեւի նախաձեռնությամբ հրավիրեց խորհրդակցություն:

Այն նվիրված էր ռազմական հարցերին: Մասնակցում էին Ադրբեջանի միլի-մեջլիսի անդամները, նախարարությունների եւ գերատեսչությունների ղեկավարները, պետական խորհրդականները եւ նախագահի աղարաշի պատասխանատու աշխատակիցները, գործադիր իշխանության ղեկավարները, զինկոմիսարները, ներքին գործերի վարչությունների եւ բաժինների պետերը, քաղաքների եւ շրջանների դատախազները: Խորհրդակցությունը վարում էր նախագահը:

Հանդիպումը տեղի էր ունենում փակ դռների ետեւում, մանրամասներ չեն հաղորդվել: ■

Պոլտավայի շարը Հայաստան չհասավ

Ուկրաինայի անվտանգության ծառայության մամուլի կենտրոնի հաղորդագրության համաձայն, Պոլտավայի մարզի ռազմական հակահետախուզությունը կանխել է շարի մեծ խմբաքանակի առաքինի արտահանումը Ուկրաինայի տարածքից: 302 տոն նա շար էր բեռնավորվել քաղաքացիական ավիացիայի Սամարայի վարչության Իլ-86 օդանավը, որը վարձակալել էր Հայաստանի փոքր ձեռնարկությունը: Շարի վաճառքից ստացված միջոցները պետք է հանձնվեին Պոլտավայի մարզի բյուջե: Իրավապահ մարմինները ստուգում են մարզային վարչակազմի որոշ պաշտոնյաների գործունեությունը: ■

Ստուգման ժամկետը երկարացվել է

Հայաստանի նախագահի մամուլի ծառայությունից ստացված տվյալների համաձայն, Լեւոն Տեր-Պետրոսյանը մինչեւ օգոստոսի 29-ը երկարացրել է Հայաստանի կուսակցությունների եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության ստուգման ժամկետը, որն իրականացնում էին դատախազությունը եւ արդարադատության նախարարությունը: Ժամկետը լրացավ հուլիսի 29-ին, սակայն երկարացվեց, քանի որ, ըստ երեւույթին, դատախազությունը եւ արդարադատության նախարարությունը չեն հասցրել ավարտել ստուգումը: ■

Հայկական բաց համալսարանը հայտարարում է ընդունելություն 1992-1993 ուսումնական տարվա համար

Համալսարանն ունի հետեւյալ ֆակուլտետները.

Քաղաքագիտության եւ խորհրդարանային գործունեության (դասավանդվում են կադրեր պետական, հասարակական եւ հասարակական-քաղաքական կազմակերպություններում աշխատելու համար),

միջազգային իրավունքի (շրջանավարտները ստանալով միջազգային իրավաբանի մասնագիտություն, կարող են աշխատել Հայաստանի Հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս),

միջազգային ժուռնալիստիկայի (դասավանդվում են կադրեր միջազգային լրատվության ասպարեզում, ներքին եւ արտաքին սփյուռքում, ինչպես նաեւ գանազան տեղեկատվական գործակալություններում աշխատելու համար),

մենեջերների (այս ֆակուլտետի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու պետական համակարգում եւ միջազգային համատեղ ձեռնարկություններում, տնտեսական եւ ֆինանսական միավորումներում, մասնավոր ֆիրմաներում),

գեղարվեստական մոդելավորման (այս ֆակուլտետի շրջանավարտները ձեռք են բերում թեթեւ արդյունաբերության ձեռնարկությունների եւ մասնավոր ֆիրմաների, ինչպես նաեւ մեծակոյթի տարբեր օջախների հագուստի նկարիչ-մոդելագործի մասնագիտություն):

Հայկական բաց համալսարանում ուսուցումը տարվում է գերազանցապես հայերեն:

Ուսուցման ժամկետը չորս տարի է:

Համալսարան ընդունվելու իրավունքից օգտվում են, անկախ տարիքից, Հայաստանի, ինչպես նաեւ ցանկացած այլ երկրների այն քաղաքացիները, որոնք ունեն միջնակարգ-մասնագիտական կրթության վկայական:

Համալսարան կարող են ընդունվել նաեւ բարձրագույն կրթություն ունեցող անձինք:

ՀԲՀ-ում կարող են սովորել այլ բուհերի ուսանողները:

Հայկական բաց համալսարանում ուսուցումը վճարովի է:

Ուսման վարձը կարող են մուծել ինչպես անհատ անձինք, այնպես էլ պետական, կոոպերատիվ, բարեգործական, հասարակական կազմակերպությունները՝ կանխիկ կամ փոխանցման կարգով:

Փաստաթղթերի ձեւակերպման եւ ընդունելության հնությունների կազմակերպման համար մուծվում է որոշակի գումար:

Դիմորդները ներկայացնում են հետեւյալ փաստաթղթերը. դիմում՝ Հայկական բաց համալսարանի ռեկտորի անունով, միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթության փաստաթուղթ (իսկականը կամ պատճենը), տեղեկանք առողջության մասին (ձեւ թիվ 086 Ռ), 6 լուսանկար (3x4 չափի):

Դիմումներն ընդունվում են սեպտեմբերի 10-ից մինչեւ հուլիսի 31-ը, մինչեւ ժամը 16-ը:

Ընդունելության հնությունները կանցկացվեն սեպտեմբերի 1-ից մինչեւ օգոստոսի 15-ը:

Ընդունելության հանձնաժողովն աշխատում է ամեն օր, ժամը 10-19-ը: Ընդմիջում՝ ժամը 14-15-ը: Շաբաթ եւ կիրակի օրերին՝ ժամը 10-14-ը:

Հասցեն. Ք. Երեւան, Մոսկովյան փողոց 17 (Ա. Պուշկինի անվան դրոշի փող., 2-րդ հարկ):

Հեռ. 56-49-31:

Ռեկտորատ

digitised by A.R.A.R.@

Հարցազրույց Գերմանիայում աշխատող հայ մասնագետի հետ

Իրան–Հայաստան–Վրաստան կամը այս շրջանի ապագան է

Այդ դեպքում Հայաստանը դրական դեր կխաղա աշխարհի ապագա աշխարհաքաղաքական իրադրության ստեղծման գործում

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը միանգամից հայտնվեց նոր աշխարհաքաղաքական իրադրության մեջ եւ կամա թե ակամա ստիպված է վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Անցած մեկ տարվա ընթացքում արդեն բավականին պարզորոշ կերպով ուրվագծվեցին այդ քաղաքականության հիմնական ուղղությունները, հաջողություններն ու անհաջողությունները: Այս մասին մեր թղթակցի հարցերին պատասխանում է պատմաբան ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԸ: Նա ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, աշխատել Հայաստանի գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտում, որտեղ էլ պաշտպանել է դիսերտացիա՝ «Արեւմտյան Գերմանիայի քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում» թեմայով եւ արժանացել Ալեխանդր Ֆոն Հումբոլդտի անվան հիմնադրամի թոշակին: Երկու տարի աշխատել է Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվում՝ ուսումնասիրելով գերմանական փաստաթղթերը Հայաստանի եւ Անդրկովկասի, ինչպես նաեւ Ցեղասպանության վերաբերյալ: Գործակցում է «Գերմանական ալիք» ռադիոկայանին, աշխատում է Բոննում՝ որպես պատմաբան եւ հրապարակախոս:

– Պարոն Մանուչարյան, արտքուս այն տպավորությունն է ստեղծվել, թե Հայաստանը վարում է ակտիվ արտաքին քաղաքականություն: Դուք Գերմանիայից ուշադիր հետեւում եք դրան. ձեր կարծիքը:

– Հայաստանի արտաքին քաղաքականությունը գտնվում է կազմավորման փուլում եւ շատ կարեւոր է, որ կարողանա այս փուլում խուսափել այնպիսի սխալներից, որոնք կարող են բավականին վտանգավոր լինել հայ ժողովրդի ապագայի համար: Այսօր շարունակ քարոզվում է, թե Հայաստանի եւ տասնյակ պետությունների միջեւ կնքված դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի արտաքին քաղաքականության հաջողություններն են, մինչդեռ իրականում դա ՄԱԿ-ի անդամ երկրի նորմալ վիճակն է: Բայց քանակի հետեւից ընկնելով, մենք հավասարիմ դաշնակիցներ ենք կորցնում: Ավելին, մենք խզում ենք մեր հարաբերություններն այն երկրների հետ, որոնք կցանկանային մեզ հետ հարաբերություններ հաստատել: Իմ կարծիքով, սա խիստ բացասական երեւույթ է:

Կցանկանայի կոնկրետացնել ասածս. Հայաստանի արտաքին քաղաքականության կողմից այսօր անտեսվում է այնպիսի տնտեսապես հզոր երկրի գոյությունը, ինչպիսին Գերմանիան է: Գերմանիա կատարած մի քանի պաշտոնական այցելություններն ամենեին էլ չեն վկայում, թե Հայաստանը սերտ կապեր է հաստատում այդ պետության հետ: Այն փաստը, որ այսօր Հայաստանում չկա Գերմանիայի դեսպանություն, դրա ապացույցն է:

Այսօր Գերմանիան Երկրորդ համաշխարհային պատերազմից, Երրորդում տեղի ունեցած գործընթացներից, սառը պատերազմի եւ Արեւմտյան-Արեւելյան վեճի ավարտից հետո վարում է խաղաղարար քաղաքականություն: Ինչո՞ւ եմ սա ասում: Հայաստանը պետք է փորձի հենվել նման երկրների վրա, որոնք ունեն թե քաղաքական, թե տնտեսական մեծ կշիռ եւ կարող են օժանդակել այլ երկրների տնտեսական զարգացմանը: Զարգացող երկրներին ցուցաբերվող տնտեսական օգնությամբ Գերմանիան առաջին տեղն է զբաղեցնում: Իսկ դրանից որքա՞ն է ներդրվել Հայաստանում այսօրվա դրությամբ. ոչինչ: Այդ ուղղությամբ բանակցություններ վարվո՞ւմ են, չգիտեմ: Ամբողջ աշխարհում մեծ զարմանք առաջացրեց այն փաստը (Ես դա գնահատում եմ որպես բավականին խիզախ քայլ), երբ պրն. Հանս Դիտրիխ Գենշերը հանդես եկավ թուրքական կառավարության հասցեին կտրուկ հայտարարությամբ: Խոսքը գերմանական տանկերի մասին էր, որոնք ՆԱՏՕ-ի գծով հանձնվել էին Թուրքիային՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների սահմանների անվտանգությունն ապահովելու նպատակով, եւ որոնք Թուրքիայի կողմից օգտագործվել էին քուրդ ազգաբնակչության դեմ, Նովրոզի տոնի ժամանակ: Թուրքիան դրան շատ արագ արձագանքեց՝ Գենշերին անվանելով Ադոլֆ Հիտլեր եւ ամբողջ աշխարհով մեկ քարոզչական հզոր արշավանք սկսեց, Գերմանիայի ներկայիս ղեկավարներին մեղադրելով հրեական ազդեցության մեջ: Մինչդեռ մենք գիտենք, որ ով-ով, բայց Թուրքիան իրավունք չունի խոսնվելու գերմանա-իսրայելական հարաբերություններին, որովհետեւ իր ճակատին դաջված է 1915 թ. հայկական ցեղասպանության խարանը:

– Վերջերս մենք անընդհատ խոսում ենք լրատվական ծակատում կրած մեր պարտությունների մասին, եւ դա վերագրում հակառակ կողմի, այսինքն Ադրբեջանի համաղաղասիրական ծառայությունների ավելի բարձր պրոֆեսիոնալիզմին: Ինչպիսի՞ն է պատկերը Գերմանիայում:

– Գերմանիայի զանգվածային լրատվության միջոցներն (ես ի նկատի ունեմ գերմանալեզու միջոցները) հեղեղված են հոդվածներով, որոնց վերլուծությունը վկայում է, որ դրանք ունեն հստակ հակահայկական ուղղվածություն, թեեւ արտաքնապես Թուրքիան հայտարարում է, թե ինքը երջանի երկրների նկատմամբ բավականին խաղաղասիրական քաղաքականություն է վարում: Դա մասնավորապես արտահայտվում է *«Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայտունգ»* թերթի հոդվածներում, գերմանական հեռուստատեսությամբ Ադրբեջանի տարածից տրված մի շարք հաղորդումներում, ինչպես նաեւ Գերմանիայում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչների հարցազրույցներում: Ադրբեջանն ինքը ոչ նյութական, ոչ մասնագիտական հնարավորություններ ունի խորությամբ ներթափանցելու Գերմանիայի զանգվածային լրատվության միջոցները: Դրա համար անհրաժեշտ են մասնագետներ, լեզվի, միջավայրի իմացություն եւ այլն: Ադրբեջանի քարոզչությունը պարզապես շատ արագ ընդգրկվեց այն կառույցներում, որ տասնամյակներ ի վեր Արեւմտյան Եւրոպայում եւ մասնավորապես Գերմանիայում ուներ Թուրքիան: Չի կարելի մոռանալ, որ Գերմանիայում են բնակվում մոտ երկու միլիոն թուրքեր, որոնք հրավիրվել են 50-ական թվականների վերջերին՝ օժանդակելու Գերմանիայի «տնտեսական հրաշքին»: Հետագայում նրանք, ի տարբերություն նույն նպատակով հրավիրված իսպանացիների, իտալացիների եւ հարավսլավացիների, չվերադարձան:

Գերմանիայի զանգվածային լրատվության միջոցներում Ադրբեջանի քարոզչությանը Թուրքիայի աջակցելու մասին է վկայում նաեւ այն փաստը, որ Ադրբեջանում Էլչիբեյի իշխանության գլուխ բարձրանալը ներկայացվեց գրեթե որպես «Մեսիայի գալուստ»: Լռության մատնվեցին նրա այն հայտարարությունները (հենց դրանց շնորհիվ էլ նա հաղթեց ընտրություններում), թե ինքը Ղարաբաղի հարցը կլուծի այնպես, ինչպես դա ցանկանում են ադրբեջանցիները:

– Առհասարակ, ինչպե՞ս են պատկերացնում Գերմանիայում Ղարաբաղի հարցը: Արդյոք նրանք բավականաչափ տեղեկացվա՞ծ են:

– Ես ուշադրությամբ հետեւում եմ, թե Գերմանիայում ինչպես է զարգանում պատկերացումը Ղարաբաղյան խնդրի եւ Ղարաբաղի բնակչության պայքարի մասին: Այստեղ ես կցանկանայի ընդգծել հետեւյալը. չնայած գերմանա-իսրայելական հարաբերությունների բարդ սեկտորին, 1974 թ. Գերմանիան ճանաչեց պաղեստինցիների ինքնորոշման իրավունքը: Ղարաբաղցիների ինքնորոշման իրավունքը Գերմանիան չի ճանաչել: Այստեղ ես տեսնում եմ Հայաստանի կառավարության վարած արտաքին քաղաքականության սխալը, որը չի օգտագործել զանգվածային լրատվության միջոցները եւ արեւմուտքի քաղաքացիներին բավարար հստակությամբ չի ներկայացրել Ղարաբաղյան հիմնահարցի էությունը: Գերմանական մամուլում տպագրվող հոդվածներում փորձեր են արվում ապացուցել, թե Ղարաբաղի հայերը արյունարբու են, Հայաստանն ագրեսոր է եւ այլն: Էլ չխոսենք այն մասին, որ այսպես կոչված «վերակառուցման» սկզբնական շրջանում Ղարաբաղյան շարժումը ներկայացվում էր գորբաչովյան բնորոշումներով՝ որպես ԽՍՀՄ-ում ժողովրդավարության եւ վերակառուցման թիկունքին հասցված դաշույնի հարված: Այսօր Գերմանիայի համար ավելի կարեւոր են Հարավսլավիայի իրադարձությունները, որովհետեւ դրանք պատանում են Եւրոպայի անվտանգությանը: Իսկ Ղարաբաղի մասին հրապարակվում են միայն փոքրիկ, լրատվական բնույթի հաղորդագրություններ, ինչպես նաեւ թուրքամետ լրագրողների ավելի մեծածավալ հոդվածներ:

– Այս բոլորը դարձյալ գալիս առնչվում են Հայաստանի արտաքին քաղաքականությանը: Դուք ինչ հեռանկարներ եք տեսնում:

– Ես կարծում եմ, որ Հայաստանը չպետք է որեւէ հզոր պետության ձեռքին խաղալիք դառնա: Բայց այժմ Հայաստանի արտաքին քաղաքականության վրա զգացվում է ամերիկամետ ազդեցություն, որը ես չեմ ողջունում, քանի որ դա կհանգեցնի նրան, որ Հայաստանը կհայտնվի Թուրքիայի ազդեցության ոլորտում: Հայաստանի իշխանությունների՝ Իրանի հետ լավ հարաբերություններ հաստատելու ջանքերն, իմ կարծիքով, բավարար մակարդակի չեն հասել: Այս ուղղությամբ Հայաստանը պետք է ավելի ակտիվ գործի:

Մինչդեռ, Իրանի կողմից միջազգային մեկուսացումից դուրս գալու հզոր փորձեր են արվում, որի մեջ Իրանին փորձում է դնել Վաշինգտոնը: Այս առումով Իրանի համար մեծ կարեւորություն է ստանում Հայաստանի հետ ունեցած 46 կիլոմետրանոց սահմանը: Իրան-Հայաստան-Վրաստան կամը այս երջանի ապագան է: Դա նաեւ Ռուսաստանին եւ Եւրոպային հնարավորություն կտա անմիջապես դուրս գալ Մերձավոր եւ Միջին Արեւելքի շուկաներն ու հումքի աղբյուրները: Այսինքն, Հայաստանը դառնում է ոչ միայն թուրքական համաստարած գոտու ստեղծման խոչընդոտ, այլեւ դրական դեր է կատարում աշխարհի ապագա աշխարհաքաղաքական իրադրության ստեղծման գործում: Իրադրությունը, որը հիմնված կլինի ոչ թե մի պետության՝ Ամերիկայի գերիշխանության, այլ բոլոր երկրների փոխշահավետ համագործակցության վրա:

Ես հիշում եմ «Երրորդ ուժի բացման օրենքը», որը թեեւ շատ հետաքրքիր էր, բայց չէր կարելի օգտագործել որպես հայկական պետականության անկյունաքար: Ռուսաստանը, եւ ընդհանրապես նախկին ԽՍՀՄ պետությունները այն իրականությունն են, որոնց հաշվին Հայաստանը գոյատեւում է: Հայաստանը տնտեսական առումով 80 տոկոսով կախված է այդ տարածքից, եւ դա անտեսելը պարզապես ծիծաղելի է:

Ռուսաստանի եւ մյուս հանրապետությունների հետ հարաբերությունները մեզ համար կարեւոր են նաեւ աշխարհաքաղաքական նկատառումներով: Պետք չէ մոռանալ, որ մենք մեկուսացված ենք այնքան, ինչքան Ադրբեջանը: Ադրբեջանը նույնպես գտնվում է Ռուսաստանի ազդեցության ոլորտում: Անդրկովկասի ազգամիջյան բախումները դրա վկայություններն են. Ռուսաստանը գտնվում է հակամարտությունների բոլոր կողմերում՝ լինի դա վրաց-օսականը, թե ադրբեջանա-ղարաբաղյանը: Ռուսաստանը զենք է մատակարարում բոլոր հակամարտ կողմերին՝ մեկին մի փոքր ավելի, մյուսին՝ պակաս: Այս տատանումները շարունակվելու են, բայց կողմերից ոչ մեկը չի կարող ռազմական առումով անկախ լինել: Ադրբեջանի ռազմական պաշարները նույնքան հիչ են, որքան Հայաստանինը, եւ այն սպառելով, Ադրբեջանը ստիպված է լինելու նորից դիմել Ռուսաստանին: Հենց միայն այս ամենը հաշվի առնելով՝ Հայաստանը պարտավոր է ամրապնդել կապերը ԱՊՀ երկրների հետ:

Ինձ մոտ զարմանք է առաջացնում ԼՂՀ ճանաչման հարցում Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը: Իմ կարծիքով, եթե Հայաստանը հրաժարվեր դեկտեմբերի 1-ի որոշումից ԼՂՀ-ի գոյության դիմաց, արդա համոզված եմ, որ դա կբերեր խաղաղություն: Բայց պարզվեց, որ Ադրբեջանի հետ այդպիսի պայմանավորվածություն չի եղել, եւ Հայաստանը, չճանաչելով Ղարաբաղը, որ իրականության մեջ գիշում է հոգուս Ադրբեջանի, փաստորեն ոչինչ չի ստացել: Նույնիսկ երջափակումը շարունակվում է: Մինչդեռ երջափակման վերացումը կարող էր լինել այն գիշումը, որը կկատարեր Ադրբեջանը՝ մեր անկախ տարածքի մի մասի անկյալային գոյության փոխարեն: Այս ամենը ես համարում եմ Հայաստանի արտաքին քաղաքականության պարտությունը:

Ռուսաստանի հետ կնքած պայմանագիրը նույնպես Հայաստանի համար ոչ մի դրական հետեւանք չունեցավ. Ադրբեջանն ավելի վաղ զենք ստացավ կամ գնեց, քան Հայաստանը: Հայաստանին զենքի հանձնումը արհեստականորեն դանդաղեցվում է: Միջազգային դրակտիկայում սա նույնպես բնութագրվում է որպես ռազմաքաղաքական պարտություն:

Վերջում կուզեի ասել հետեւյալը. Հայաստանում իսկապես գոյություն ունի ժողովրդավարություն, եւ դա չի կարելի հերքել: Ինձ ամենից շատ դուրս է գալիս հանրաքվեն, որ վերջին երջանում ընդդիմությունը համախմբվել է եւ կարողացել ազդել Գերագույն խորհրդի այն որոշման վրա, ըստ որի Հայաստանի համար անընդունելի է Ղարաբաղը Ադրբեջանի մաս հիշատակող ցանկացած փաստաթուղթ: Դրանով իսկ Հայաստանը, փաստորեն, կողմնակի կերպով ճանաչել է ԼՂՀ-ի գոյությունը: Կարծում եմ, որ ընդդիմության հաջորդ կառուցողական քայլերը եւս որոշակի առումով կազդեն Հայաստանի արտաքին քաղաքականության այլ բնագավառների վրա: Հայաստանի արտգործնախարարությունում աշխատում են բազմաթիվ բարձրորակ մասնագետներ, Հայաստանի քաղաքացիներ, եւ ես վստահ եմ, որ նրանց է պատկանում Հայաստանի արտաքին քաղաքականության ապագան: Քաղաքականությունն, որի միակ նպատակը պետք է լինի Հայաստանի Հանրապետության շահերին ծառայելը:

Զրույցը վարեց
ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ԹՄՄ-ն սահմանել է հայանպաստ ծառայության ամենամյա մրցանակ

Թեհեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը հրապարակել է մի հաղորդագրություն, որից տեղեկանում ենք, թե նա հաստատել է հայանպաստ ծառայության ամենամյա մրցանակ՝ Անի եւ Սամի Թոքահ ամուսինների անունով:

Մրցանակն ամեն տարի հատկացվելու է հայ կամ օտարազգի այն գործիչներին, որոնց գործունեությունը ծառայած կլինի հայկական մշակույթին, պատմությանը, ինքնությանը եւ մարդկային իրավունքների պաշտպանությանը կամ զարգացմանն ամբողջ աշխարհում, ներառյալ նորանկախ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը:

Տարեկան 3000 դոլլարի մրցանակը ֆինանսավորվելու է Թեհեյան մշակութային միության Անի եւ Սոմի Թոքահ հիմնադրամի միջոցով եւ հանձնվելու է մրցանակակրին կամ նրա նախասիրած բարեգործական նպատակին: Մրցանակակիրն ստանալու է նաեւ հատուկ հուշատախտակ:

ԹՄՄ Ա. եւ Ս. Թոքահ հայանպաստ ծառայության մրցանակի դատակազմը բաղկացած է ԹՄՄ կենտրոնական վարչության ատենապետներից, ՌԱԿ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի շրջանային վարչության ատենապետերից, դոկտ. Գեւորգ Քեշիշյանից, Երվանդ Ազատյանից, Արա Գալայճյանից եւ Գրիգոր Քյոսեյանից:

Տիկին Անի Թոքահը Մ. Նահանգներում եւ հատկապես Վաշինգտոնում հայտնի լոբբիստ է, ՌԱԿ Հայ դատի խորհրդի դատախանատու անդամ: ■

Որբ եւ հաշմանդամ երեխաները չեն մոռացվել

Սպիտակի երկրաշարժից դեռ չորս տարի էլ չի անցել, բայց թվում է, թե այն շատ վաղուց է տեղի ունեցել. մոռացության գիրկն են անցնում նյութական եւ մարդկային կորուստների հետեւանքով առաջացած ցավն ու մորմոքը, իսկ մեծ թվով որբ եւ հաշմանդամ երեխաների հոգսն այլեւս հասարակության եւ բարեգործական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում չէ:

Բարեբախտաբար, դեռ կան առանձին մարդիկ եւ հասատությունններ, որոնք այլ կերպ են մտածում ու գործում. Անգլիական *Բուլվինոս Քեմիքլս Լիմիթդ* ֆիրմայի (տնօրեն՝ Վարդան Ուզունյան) երեւանի ներկայացուցչությունը, արձագանքելով Մերձավոր Արեւելքի հայ ավետարանական եկեղեցիների միության (պատասխանատու քարտուղար՝ վերապատվելի Գրիգոր Յումուշկյան) նախաձեռնությանը այս տարի աղետի գոտու ծնողազուրկ 30-ական երեխաներից կազմված երկու եւ 50 մեկ հաշմանդամ երեխաներից կազմված խմբեր է ուղարկելու Սիրիա եւ Լիբանան, նրանց հանգիստը կազմակերպելու՝ եւ վերականգնողական բուժում անցնելու նպատակով:

Խմբերից մեկն արդեն վերադարձել է, եւ, ինչպես ասաց ուղեկցողներից Վարսիկ Ավետիսյանը, 7-11 տարեկան որբ երեխաների այցը Սիրիա եւ Քեսաբին մոտակա Հայ ավետարանական եկեղեցու հանգստավայրում նրանց 17 օրյա հանգիստը մեծ տպավորություն է թողել մինչ այդ Հայաստանից ոչ մի անգամ դուրս չեկած աղջիկների եւ տղաների վրա:

Ամբողջ հայ համայնքը, տեղի մեծահարուստները մեծ հոգատարությամբ են շրջապատել նրանց, նվիրել բազմատեսակ թանկարժեք հագուստներ, դպրոցական գրենապիտույքներ եւ պայուսակներ: Երկրաշարժից հետո հիմնականում ծեր տատիկ-պապիկների խնամքին թողնված մանուկները ջերմության, ուշադրության եւ ուրալից վերաբերմունքի արժանանալով, միանգամայն այլ՝ զվարթ ու աշխույժ տրամադրությամբ են վերադարձել: Դա մեր պայմաններում կարելի է ամենամեծ ձեռքբերումը համարել:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Թուրքիայի ռազմականացման մասին

Ըստ Ֆրանսիայում հրատարակված մի տեղեկագրի

Մեր նախորդ հոդվածում (տես «Ազգ» 28.07.92) մենք մանրամասն անդրադարձանք Թուրքիայի տնտեսական, ներքին եւ արտաքին քաղաքական իրավիճակի վերլուծությանը, որը կազմել էին Ֆրանսիայի հայկական ուսումնասիրության վավերագրության եւ տեղեկատվության կենտրոնի փորձագետները՝ «Թուրքիա. սոցիալ-քաղաքական, տնտեսական եւ ռազմական ուսումնասիրություն, 1985-1990 թթ.» վերնագրով: Տեղեկագրում հատուկ ուշադրության է արժանացել Թուրքիայի ռազմականացման քաղաքականությունը: Այդ պատճառով մենք որոշեցինք այդ գլուխը տալ բարգմանաբար, որոշ կրճատումներով, բայց մեր լրացումներով:

Թուրքական բանակն ունի մոտ 800 հազար զինվոր եւ հիմնականում զինված է 40-60-ական թթ. ռազմական տեխնիկայով: 1980-ականներին թուրքական բանակն արեւմտյան ռազմական փորձագետների աչքին իրենից տխուր պատկեր էր ներկայացնում: ՆԱՏՕ-ի զինված ուժերի հրամանատար Ալեքսանդր Հեյգը այն բնութագրել է որպես մեսաղի ջարդոնի գերեզմանոց: 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը կասեցրեց թուրքական բանակի քայքայումը: Հեղաշրջման անմիջական արդյունքներից մեկը հանդիսացավ 1980 թ. մարտին ստորագրված ամերիկա-թուրքական ռազմական համագործակցության մասին համաձայնագրի վավերացումը, ինչպես նաեւ 1981 թ. դեկտեմբերին ստեղծված ընդհանուր պաշտպանության «խառը խմբի» կազմակերպումը, կազմված Պենտագոնի եւ թուրքական բանակի գլխավոր պայմանագրի բարձր պաշտոնյաներից, որը պետք է որոշեր ընդհանուր ռազմական կարիքները եւ գնահատեր զինամթերքի սեփական արտադրության հնարավորությունները: Խոսքը հատկապես 1984 թ. Անկարայի մոտ F-16 կործանիչ-ռմբակոծչի արտադրության համար գործարանի կառուցման մասին էր:

Թուրքական բանակի վերազինումը ուղեկցվում է ռազմական ծախսերի աճով՝ մինչեւ 5,2 տոկոս եւ ամերիկյան ռազմական օգնության ավելացումով, 1984-85 թթ. համապատասխանաբար 715-704 մլն դոլար, ներառյալ տնտեսական օգնությունը՝ 140 եւ 175 մլն դոլար: 1982 թ. ապրիլին Թուրքիան ՆԱՏՕ-ի առջեւ պարտավորություն ստանձնեց աղահովել արագ տեղաշարժման ուժերի նյութատեխնիկական մատակարարումը: 1982 թ. նոյեմբերին ԱՄՆ-ի ռազմական նախարար Ռ. Պեոլը եւ թուրքական բանակի գլխավոր պայմանագրի պետի տեղակալ, գեներալ Ն. Օզթորուքը համաձայնագիր ստորագրեցին Թուրքիայում 10 ռազմական օդանավակայանների վերակառուցման եւ երկու նոր ռազմաօդային բազաների շինարարության մասին Բաթմանում (Դիարբեքիր) եւ Մուշում:

1985-90 թթ. ընթացքում Թուրքիան ուժեղացնում էր իր ջանքերը բանակի վերազինման ուղղությամբ: Ռազմական ծախսերի աճն ու Թուրքիայի երկու հզոր դաշնակիցների՝ ԱՄՆ-ի եւ Գերմանիայի օգնությունը հնարավորություն տվեցին էապես վերազինել Թուրքիայի ցամաքային, օդային եւ ծովային ուժերը: Ռազմական ծախսերը 1988 թ. կազմեցին 2424100 մլն լիրա (1,7 մլրդ դոլար), իսկ 1989 թ.՝ 7464250 մլն լիրա (2,1 մլրդ դոլար): 1986-90 թթ. ընթացքում Թուրքիայի ռազմական ծախսերը տատանվում էին ազգային եկամտի 4,3 եւ 4,9 տոկոսների միջեւ: 1990 թ. Թուրքիայի ռազմական ծախսերը ավելացան 30 տոկոսով (Հունաստանի 3 տոկոսի դիմաց) եւ կազմեցին 7841 մլրդ լիրա (3,2 մլրդ դոլար):

Պետական բյուջեի մեկ քառորդը ծախսվում է ռազմական նպատակների համար, այն դեպքում, երբ ՆԱՏՕ-ի անդամ մյուս երկրները կրճատում են իրենց ռազմական ծախսերը, հաշվի առնելով Արեւելյան Եւրոպայում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունները: 1991 թ. բյուջեով ռազմական ծախսերը նախատեսվում էին 4,7 մլրդ դոլար: Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի տվյալների համաձայն, Թուրքիան աշխարհում գրավում է 10-րդ տեղը ռազմական տեխնիկայի ներմուծման գծով՝ 4751 մլն դոլար (1985-1989 թթ. ներառյալ):

Համաձայն Լոնդոնի ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի տվյալների, 1990-91 թթ. Թուրքիայի բանակն ուներ 647 400 զինվոր: Իր թվական կազմով նա գրավում է երկրորդ տեղը ՆԱՏՕ-ում (ԱՄՆ-ից հետո) եւ 9-րդը աշխարհում: Ընդհանուր զորահավաքի դեպքում թուրքական բանակը կարող է ունենալ 1,1 մլն զինվոր (մինչեւ 46 տարեկան): Ցամաքային զորքերի թիվը կազմում է 525 հազար (չորս դաշտային բանակ եւ ուրիշ զորամիավորումներ):

Առաջին բանակը տեղակայված է Սեւծովյան նեղուցների ավազանում (Ստամբուլ), երկրորդը՝ կենտրոնական Անատոլիայում (Մալաթիա), երրորդը՝ արեւելյան Անատոլիայում (Էրզինջան) եւ չորրորդը՝ Էգեյան ծովի շրջանում (Իզմիր):

Ռազմական փորձագետները գրում են, որ թուրքական բանակի համակողմանի վերազինման համար անհրաժեշտ է 1-1,2 մլրդ դոլար ամենամյա ռազմական օգնություն առաջիկա տասը տարիների ընթացքում: Թուրքիան հասկացավ բանակը սեփական զենքով վերազինելու անհրաժեշտությունը, երբ 70-ական թվականներին ԱՄՆ-ը կասեցրեց ռազմական տեխնիկայի առաքումը Թուրքիա: 1985 թ. նոյեմբերին թուրքական կառավարությունը ստեղծեց հատուկ հիմնադրամ՝ ռազմական արդյունաբերության զարգացման եւ սեփական ռազմական տեխնիկայի արտադրության համար:

Թուրքիայի ռազմածովային ուժերի թիվը կազմում է 55 հազար, իսկ ռազմաօդային ուժերինը՝ 67 հազար: Թուրքական սուզանավերը բավականաչափ ժամանակակից են: ԱՄՆ-ն Թուրքիային տրամադրել է ութ F-16 կործանիչ-ռմբակոծիչ, իսկ 152-ը պետք է հավաքվեն Թուրքիայում, որոնց արտադրությունը սկսվել է 1986 թ. Անկարայի մոտ գտնվող գործարանում: Մինչեւ 1990 թ. փետրվարը արտադրվել էր 39 F-16: Այժմ ամեն ամիս արտադրվում է երկու F-16: Ըստ «Հյուրրիյեթ» թերթի 1992 թ. հունիսի 9-ի տվյալների, Թուրքիայի ռազմաօդային ուժերն իրենց տրամադրության տակ արդեն ունեն 100 F-16: Թուրքիան F-16 պետք է վաճառի նաեւ Եգիպտոսին:

«Հյուսիս-Ատլանտյան դաշինքի ընդհանուր ռազմական օգնությունը Թուրքիային կազմել է 2.880 մլն դոլար: 1985 թ. ամերիկյան ռազմական օգնությունը Թուրքիային կազմեց մոտ 800 մլն դոլար, իսկ 1987-90 թթ. իջավ մինչեւ 500 մլն դոլարի: Թուրքիան ԱՄՆ-ից պահանջում է տարեկան մինչեւ 1 մլրդ դոլար ռազմական օգնություն: ԱՄՆ-ը Հունաստանին եւ Թուրքիային ռազմական օգնություն է տրամադրում ավանդաբար 7:10 հարաբերությամբ: Այդ իսկ պատճառով Ռեյգանի վարչակազմի՝ 1988 թ. համար Թուրքիային նախատեսված 910 մլն դոլար ռազմական օգնությունը Կոնգրեսը կրճատեց մինչեւ 525 մլն դոլարի: 1991 թ. համար նախագահ Բուշին հաջողվեց խոսեցնել այդ հարաբերակցությունը: Ընդհանուր ռազմական օգնությունը Թուրքիային կազմելու էր մոտ 1 մլրդ դոլար:

Թուրքիան գրավում է երրորդ տեղը ամերիկյան ռազմական օգնություն ստացող երկրների շարքում, Իսրայելից եւ Եգիպտոսից հետո: 1992 թ. համար Բուշի վարչակազմը նախատեսել էր Թուրքիային տրամադրել 628,5 մլն դոլար ռազմական օգնություն եւ 75,4 մլն դոլարի տնտեսական օգնություն, բայց կոնգրեսին հաջողվեց պահպանել վերոհիշյալ հարաբերակցությունը եւ ռազմական օգնությունը Թուրքիային իջեցնել մինչեւ 503,5 մլն դոլարի, փոխարենը ավելացնելով տնտեսականը՝ 190,4 մլն դոլար: Բացի դրանից, ԱՄՆ-ը Թուրքիային վարկ տրամադրեց զինամթերք գնելու համար: Այսպես օրինակ, ամերիկյան ներմուծման-արտահանման բանկը Թուրքիային տրամադրեց 1,370 մլն դոլար փոխառություն 200 Սիկորսկի ուղղաթիռ գնելու համար»:

Տեղեկագրի վերջում բերված է Թուրքիային տրամադրված ամերիկյան ռազմական եւ տնտեսական օգնության աղյուսակը, ըստ համաձայն, 1962-85 թթ. Թուրքիան ԱՄՆ-ից ստացել է 5780 մլն դոլար ռազմական եւ 2872 մլն դոլար տնտեսական օգնություն, իսկ 1986-89 թթ. համապատասխանաբար՝ 618,5, 483,5, 493,3, 503,5 մլն դոլար ռազմական եւ 119,6, 103,1, 32,4 եւ 60,4 մլն դոլար տնտեսական օգնություն:

Հաջորդ աղյուսակում արդեն բերված են տվյալներ այն մասին, թե ինչքան է կազմելու ամերիկյան ռազմական օգնությունը Թուրքիային 1990-92 թթ. ընթացքում համապատասխանաբար 497, 500 եւ 625 մլն դոլար կամ նորից երրորդը Իսրայելից եւ Եգիպտոսից հետո: Մեկ ուրիշ աղյուսակից իմանում ենք, որ Թուրքիայի բյուջետային ռազմական ծախսերը, համեմատած նրա տարեկան ազգային եկամտի հետ, ամենաբարձրն են համեմատած ՆԱՏՕ-ի անդամ եւրոպական երկրների հետ՝ 4,9 տոկոս, որոնք վերջին տարիների աճի միտում ունեն, ՆԱՏՕ-ի միջին 3,2 տոկոսի դիմաց: Բերված է նաեւ Թուրքիայում տեղադրված ամերիկյան եւ հյուսիս-ատլանտյան ռազմական բազաների քարտեզը, որոնց մեծ մասը տեղադրված են երկրի արեւմտյան եւ արեւելյան, հատկապես հրդեհավտանգ շրջաններում եւ Սեւ ծովի ափին: Կենտրոնի փորձագետները Թուրքիայի ռազմականացման քաղաքականությանը նվիրված գլուխը վերջացնում են ընդարձակ մատենագրությամբ:

Թուրքիայի ռազմականացման վերլուծությունը, որը տրված է կենտրոնի փորձագետների կողմից, սիրտոտում առաջին ամփոփիչ աշխատանքն է, ինչն ավելի է բարձրացնում նրանց կատարած աշխատանքի կարեւորությունը: Բայց նրանք օգտագործել են այս հարցի վերաբերյալ միայն դաշտանական, բյուջեով նախատեսված ծախսերը, որոնք բոլորովին էլ լրիվ չեն: Վերցնենք, օրինակ, ռազմական ծախսերը: Նշված են միայն ուղղակի ազգային դաշտանության նախարարության գծով հատկացված ռազմական ծախսերը: Այնինչ մեծ գումար են կազմում նաեւ օժանդակ զինված ուժերի (ոստիկանություն, ժանդարմերիա, ազգային անվտանգություն, սահմանապահ) համար անուղղակի ծախսերը, ծախսերը զինվորականների եւ նրանց ընտանիքների սոցիալական ապահովագրության համար եւ «թաքնված» ռազմական ծախսերը՝ ավտոմոբիլային եւ երկաթուղագծերի, նավահանգիստների եւ օդանավակայանների շինարարության բնագավառում, որոնք ունեն ռազմական նշանակություն, բայց իրականացվում են ուրիշ նախարարությունների գծով: Սրանք ավելի մեծ գումար են կազմում, քան ուղղակի ռազմական ծախսերը:

Ինչ վերաբերում է ամերիկյան եւ արեւմտահայանյան տնտեսական եւ տեխնիկական օգնությանը Թուրքիային, պետք է նկատի ունենալ, որ վերջիններիս մեծ մասը եւս այստեղ ծախսվում է ռազմական նպատակների համար: Այսպիսով, օտարերկրյա ռազմական օգնության գումարը ավելին է, քան պաշտոնական տվյալները: Հնարավոր է, որ կենտրոնի հրատարակած առաջին տեղեկագրում կան տվյալներ Թուրքիայի հետպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում երկրի ռազմականացման ընդհանուր պատկերի մասին: Թուրքիայում արդեն կազմավորվել է ռազմարդյունաբերական համալիր, վերջացել են սեփական ատոմային զենքի արտադրության բոլոր նախապատրաստական աշխատանքները: Թուրքիան վաղուց է զենք եւ զինամթերք արտահանում: Գերմանա-թուրքական ռազմական համագործակցությունը վերջին տարիների ընթացքում սերտանում է:

Ցանկալի է, որ տեղեկագրում տվյալներ բերվեին թուրքական զինվորականների արտասահմանյան ուսուցման, օտարերկրյա զինվորական մասնագետների գործունեության մասին, հաճախակի զինադարժությունների, հատկապես երկրի արեւելյան ու հյուսիս-արեւելյան՝ Հայաստանին սահմանակից շրջաններում, այդ թվում նաեւ ՆԱՏՕ-ի զորավարժությունների մասին:

ՌԱՖԻ ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

«Ադրբեջանը մեղադրում է Հայաստանին»

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը մեղադրել է Հայաստանին հասարակ սպառազինությունների վերահսկման մասին Հելսինկիի համաձայնագրերի խախտման մեջ: Օ. գոստոսի 4-ին հրապարակված հաղորդագրության մեջ ասվում է, որ այդ համաձայնագրերին հետեւելու մտադրության մասին Հայաստանի հայտարարությունները *«աշխարհին մոլորության մեջ են գցում հողակնոց Հայաստանի գավթողական քաղաքականության բուն նպատակները»:*

Ադրբեջանի պաշտպանությունն գտնում է, որ Հայաստանը նախատեսված քանակից շատ ավելի սպառազինություն ունի: Այսպես, Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գնդի սպառազինությունը եւ գույքը, որոնք պետք է հանձնվեին Ադրբեջանին, բոլոր պայմանավորվածություններին հակառակ հանձնվեցին *«ինքնակոչ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զրահայիններին»:* Ինչեւէ, այդ զրահատեխնիկան, ավելի քան 100 միավոր, եւ նույնքան հրետանային կայանք, փաստաթղթերի համաձայն պատկանում են Ադրբեջանին:

Պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնը հաղորդեց նաեւ, որ Լաչինի միջանցքով Հայաստանից Ղարաբաղ է տեղափոխվում մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա: Միայն հուլիսի առաջին շաբաթվա ընթացքում Ղարաբաղ է տեղափոխվել 102 տանկ եւ զրահատեխնիկա: *«Այժմյան իրավիճակը, երբ Հայաստանը պատերազմում է Ադրբեջանի դեմ բացառապես ադրբեջանական տարածքում եւ հայկական ռազմական տեխնիկայի զգալի մասը նույնքան գտնվում է այնտեղ, հնարավորություն է տալիս հայկական կողմին պնդել, որ ինքը չի խախտում Հելսինկիի պայմանավորվածությունները»,* նշվում է հաղորդագրության մեջ: Միեւնույն ժամանակ Ադրբեջանին հանձնված տեխնիկան ոչնչացվում է մարտերում: Այսպես, հունիս-հուլիս ամիսներին Ադրբեջանը կորցրել է 28 տանկ, 35 զրահամեքենա, 56 հրետանային կայանք, երկու մարտական ինքնաթիռ:

Սա «Ինտերֆաքսի» հաղորդումն է:

Վերոհիշյալ, զուտ քարոզչական նպատակներ հետապնդող «գյուտերից» անկախ, հետաքրքիր է իմանալ, եթե Ղարաբաղը «բացառապես ադրբեջանական տարածք է», ապա ինչպե՞ս պիտի որակել Ադրբեջանի իսկ զգալի եւ թալանչիական գործողությունները «սեփական հողում»: ■

Թշնամուն օգնող ազգի դավաճան է

Շարունակվում է ազգային արժեքների արտահանումը Թուրքիա, որն ավելի ադեկատի հետեւանքների կարող է հանգեցնել, երբ արդեն պաշտպանական նշանակության գունավոր մետաղներով ենք հարստացնում մեր դարավոր թշնամուն:

Քանի՞ փամփուշտ կարելի է պատրաստել 1 կիլոգրամ պղնձից, դժվար է ասել, սակայն կասկածից վեր է, որ դրանցով Արցախում եւ սահմանամերձ շրջաններում նրանց արյունակիցները կռվելու են մեր դեմ: Իսկ երբ այդ քանակը հասնում է տոննաների՞:

Վերջերս Վանաձորից Թուրքիա մեկնող միայն մեկ խմբի մոտ (13 հոգի) հայտնաբերվել է 2 տոննա պղինձ: ՆԳ քաղաքային վարչության քրեական հետախուզության աշխատակիցների ջանքերով կալանվել է «Լազ» մակնիշի A 08-75 AP պետհամարանիշով ավտոբուսը: Պահեստի անիվի պահոցից հանվել է մոտ 2 տոննա պղինձ՝ թիթեղների, ժապավենի, սալիկների, զանազանակի տեսքով:

Կազմված առաջին արձանագրությունում նշված անունները միայն «դավաճան» ածականին են արժանի. «Տուրիստ» Սարգիս Ադաջանյան՝ 700 կգ պղինձ, Երան Աղաբաբյան՝ 40 կգ, Վարուժան Մալխասյան՝ 40 կգ: Քիչ չեն նաեւ խմբի ղեկավարի՝ «Յանա» առեւտրագնման կոոպերատիվի նախագահ Սվետլանա Սարգսյանի տարած բարիքները:

Ավտոբուսից իջեցվեցին նաեւ 25 կարգեր, 4 գորգ, խառատային հաստոցներ, պղնձալարեր...

Եւ այսքանը պետք է տարվեր Թուրքիա ընդամենը երկու տասնյակ ազգադավների հղփացնելու նպատակով:

Բավական չե՞ն Թուրքիայում վաճառվող հայուհիների մարմինները: Այդ ինչպե՞ս է պատահում, որ հանցագործ «գործարարների» ձեռքին են հայտնվում քաղաքի ձեռնարկություններում, բոլորակվող մանրածախ առեւտրում չվաճառվող սարքեր ու հաստոցներ:

«Հրապարակի վրա է հանրապետության նախագահի հրամանագիրը, ըստ որի խստիվ արգելվում է ազգային արժեքներն ու ստրատեգիական նշանակության նյութերը Հայաստանի սահմաններից դուրս հանել», ասում է ՆԳՎ-ի Տարոնի բաժանմունքի պետ Միխայել Ղալաջյանը: Միլիցիան այս ուղղությամբ հստակ առաջադրանք է ստացել: Իսկ ինչ վերաբերում է այս դեպքին, ամեն ինչ կպարզվի հետաքննության ընթացքում:

Մնում է հուսալ, որ մեղավորները կկրեն իրենց արժանի պատիժը, իսկ Թուրքիա մեկնող տիկնայք ու պարոնայք կաշխատեն խուսափել «ազգի դավաճան» անբարենպաստ ածականից:

ՄԱՆՎԵԼ ՍԻԿՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Ռուսաստանում բարեփոխումները չեն ստացվում

Արեւմուտքի լավատեսությունը ռուսական բարեփոխումների աղագայի վերաբերյալ հետեվողականորեն մարում է: Ընդամենը մի քանի ամիս առաջ «սառը պատերազմում» պարտություն կրած Ռուսաստանի բարեհորոգչական վերածնունդը Արեւմուտքի աջակցությամբ եւ նրա հիմնարար սկզբունքների դրոշի ներքո համեմատում էին հետպատերազմյան Գերմանիայի եւ Ճապոնիայի բարեփոխումների հետ, հույս հայտնելով, որ առյուծները Արեւմուտքի շարքերը կլրացնի եւս մեկ դաշնակից երկիր դեմոկրատական Ռուսաստանը: Սակայն, դարավերջում «Մարշալի պլանի» կրկնության փորձը նախկին ԽՍՀՄ երկրներում եւ հատկապես Ռուսաստանում կարծես թե անհույս ձեւով տապալվում է: Արեւմտյան դիտորդները ձախողման պատճառները փնտրում են ռուսական Ֆենոմենի հարուստ պատմության ու իրականության մեջ եւ յուրաքանչյուր տեսակետ յուրովի հիմնավորված է, բայց հազիվ թե բազմաթիվ ծանրակշիռ փաստարկներով: Այնուամենայնիվ, եթե անդրադառնանք «Մարշալի պլանի» եւ նրկա բաղաքականության արդյունքների զուգահեռաբար տարբեր արդյունքներին, ապա կարծում ենք, որ նախ եւ առաջ ուշադրությունը պետք է կենտրոնացնել՝ մի խիստ կարեւոր գործոնի վրա, որը այսօրվա Ռուսաստանի վիճակը էապես տարբերակում է հետպատերազմյան Գերմանիայից ու Ճապոնիայից:

Այո՛, Ռուսաստանը պարտություն է կրել «սառը պատերազմում», բայց ռուսներն իրենց պարտված ժողովուրդ չեն համարում: Ուստի ռուս ժողովրդի հոգեբարոյական վիճակն անհամեմատելի է այն համազգային ապեսի հետ, որը վերապրեցին համաշխարհային պատերազմը սանձազերծած երկու երկրների ժողովուրդները: Պատերազմից հետո գերմանացիներն ու ճապոնացիները օտարերկրյա ռազմական ուժի հարվածներից խիստ հյուծված ժողովուրդներ էին, որոնց ապագան լիովին տնօրինում էին հաղթանակած երկրները: Տոկիոյում եւ Բոննում նստած էին ամերիկյան գեներալները, որոնք ամենեին էլ չէին անհանգստանում, թե Վաշինգտոնից ստացվող հրահանգները որքանով են համապատասխանում տեղի ժողովուրդների ազգային իղձերի հետ: Գործող օրենքներն ու սահմանադրությունը թելադրվում էր անմիջականորեն ամերիկացիների կողմից եւ նվաճված ժողովուրդները պարզապես այլընտրանք չունեին: Նրանց կարծիքը ոչ ոք չէր հարցնում, եւ ուստի բարեփոխումներն արագընթաց էին եւ անդառնալի: ԱՄՆ-ի կենսական շահերը պահանջում էին համայնավարական դաշինքի դեմ ունենալ տնտեսապես վերականգնված, գաղափարախոսական նոր նորմերին ենթակա ուժեղ Գերմանիա եւ Ճապոնիա, եւ նա ջանք չխնայեց իր նպատակին հասնելու համար: Այլ հարց է, որ իրենց ցուցաբերած կարողությունների շնորհիվ այդ երկրները գերազանցեցին ամերիկացիների ակնկալիքները:

Չպետք է մոռանալ, որ երկրորդ աշխարհամարտից առաջ այս երկու երկրներն ունեին զարգացման «սեփական ուղու» ավանդական սինդրոմը, որն իր հիմնական գծերով համահունչ է «ռուսական ուղու» գաղափարի հետ: Եւ եթե նրանց ընտրության նույնքիսի իրավունք եւ հնարավորություն տվեր, ինչպես այսօր տվել է ռուս ժողովրդին, ապա կասկածից վեր է, որ կգտնվեին ուժեր, որոնք կխոչընդոտեին եւ նույնիսկ կարող էին խափանել արմատական բարեփոխումները: Իմիջիայլոց, հետագայում, երբ ամերիկյան թելադրանքի թուլացմանը զուգահեռ պարտության ցնցումը հաղթահարվեց եւ այդ երկրներում վերականգնվեց բնականոն հասարակական կյանքը, ավանդական «ազգային իդեալները» պաշտպանող ուժերը արագ վերականգնվեցին, սակայն իրադարձությունների զարգացումը շրջել արդեն անհնարին էր:

Իսկ այսօրվա Ռուսաստանում համազգային պարտության գիտակցումը հասուկ է բերեւս միայն առանձին անհատներին: Ժողովուրդն ավելի շատ հակված է խորհրդային մեծապետության կարոտախտին, քան սեփական իճնության փոփոխությանը: Այսպես կոչված «ռուսական ուղու», «ազգային արժեքների եւ շահերի» պաշտպանները խիստ կարճ ժամկետում, օգոստոսյան հեղաշրջումից ընդամենը մեկ ամիս հետո, կրկին հայտնվեցին քաղաքական բատերաբեմում եւ համայնավարական, ազգայնական-հայրենասիրական կարգախոսների համադրությամբ լուրջ խոչընդոտներ են ստեղծում ներկա վարչակարգի առաջադրած բարեփոխումների ծանապարհին: Արեւմուտքից եկող խորհուրդները, առավել եւս պահանջները իսկույն ետ վարչակարգին դավաճանության եւ կամակատարության մեջ մեղադրելու առիթ են ծառայում:

Եւ իսկապես, իրեն դեռեւս ուժեղ ու հզոր համարող ժողովրդի տեսանկյունից դա իսկական դավաճանություն է: Ռուսաստանում չկան ուժեր, որոնք համարձակություն կունենային բացահայտել սեփական ժողովրդին «ռուսական ուղու» եւ նրա պատմության ողջ սնանկությունը: Իսկ եթե լինեն, դժվար թե զանգվածները նրանց ունկնդրեն, առավել եւս հասկանան: Արեւմուտքում լավ են գիտակցում այս իրողությունը եւ ուստի չեն շտապում տասնյակ միլիարդներ տրամադրել մի երկրի, որը ամեն պահ կարող է կրկին վերածվել ստրատեգիական հակառակորդի: Կարծում ենք, որ Արեւմուտքում գիտակցում են նաեւ, որ Ռուսաստանի հրաժարումը արմատական փոփոխություններից կարող է վերջինը լինել առասական «վերածնունդների» շարքում եւ հարյուրամյակներով ձեւավորված մենաքարը կարժանանա բարեհորոգչական շարժումները երջանցած մյուս կայսրությունների բախտին:

Ինչեւիցե, Երկրի վարչակարգն առայժմ ձեւացնում է, թե արմատական բարեփոխումներ է անում, իսկ Արեւմուտքը ձեւացնում է, թե հավատում է նրան: Նույնը կրկնվում է նաեւ նախկին ԽՍՀՄ ժողովուրդների միջեւ, մեկ էական տարբերությամբ: Ռուսաստանն իր հզորության իներցիայով, գործի դնելով ռազմաքաղաքական ու տնտեսական լծակները, ձեւացնում է, թե դեռեւս ընդունակ է վերականգնելու կամ պաշտպանելու նախկին կարգավիճակը, իսկ նորաստեղծ պետականությունների ժողովուրդներն անկեղծորեն հավատում են դրան՝ անկախության գործընթացները զարգացնելու անկարող՝ իրենց հայացքը կրկին ուղղելով դեպի Մեծ Ռուսաստանը:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արեւելք» վերլուծական կենտրոն

Մեկամսյա իշխանությունից հետո հակասություններ

Բուտրոս Ղալին դժգոհություն է առաջացնում ՄԱԿ-ի երջանակներում

Մեկ տարի առաջ արաբական աշխարհն ու Աֆրիկան ցնծում էին եգիպտացի դիվանագետ Բուտրոս Ղալիի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար նշանակվելու կապակցությամբ: Ողջ երրորդ աշխարհը հույս էր հայտնում, որ վերջապես ՄԱԿ-ն իր հայացքը լրջորեն կուղղի դեպի իրեն եւ գոնե որոշ ասիճանի հանգուցալուծում կգտնի տասնամյակների ընթացքում ավանդույթներ ունեցող այնպիսի վերքերին ծայրագույն աղքատությանը, տնտեսական հետամնացությանը, զինված հակամարտություններին եւ այլն:

Դա առանձնակի կարեւորություն էր ստանում մի փուլում, երբ սոցիալիստական համակարգի փլուզումից հետո զարգացած երկրներն ավելի շատ ուշադրություն էին դարձնում Արեւելյան Եվրոպային եւ այդ երեւույթը խորացման միտում ուներ ԽՍՀՄ փլուզումից հետո երրորդ աշխարհի վիճակն էլ ավելի է ծանրացել: Բայց այսօր երրորդ աշխարհի ոգեւորությունը մարել է, իսկ մեծ տերությունների դիվանագետներն իրենց երկրների շահերի պաշտպանության տեսակետից խիստ տարակարծիք գնահատական են տալիս Ղալիի գործունեությանը: ՄԱԿ-ում ծառայող եւ հավատարմագրված դիվանագիտական կորպուսը մեղադրում է նրան կոշտ բնավորության, ավտորիտար գործելակերպի եւ իր գբաղեցրած պաշտոնին անհարիր անհանդուրժողականության համար: Մասնագետները գտնում են նաեւ, որ ՄԱԿ-ի վերակառուցմանն ուղղված Ղալիի քայլերը չեն հիմնվում ճիշտ հաշվարկների վրա: ՄԱԿ-ի բարձրաստիճան դիվանագետներից մեկը, որը ցանկացել է չբացահայտված մնալ, հայտարարել է, որ *«եթե Բուտրոս Ղալին չի ցանկանում ժամանակից շուտ լքել իր հեղինակավոր պաշտոնը, պետք է անհրաժեշտ հանդուրժողականություն ցուցաբերի ՄԱԿ-ի դիվանագետների նկատմամբ եւ հաշվի նստի այլակարծության հետ»:*

Բայց սա սառցաբեկոն սոսկ երեւացող մասն է: Առավել լուրջ բնույթ են կրում տարբեր երկրների, առայժմ հիմնականում ոչ պաշտոնական մարմինների օրեցօր ուժեղացող կշտամբանքները Բուտրոս Ղալիի նկատմամբ, որոնց թիկունքում դժվար չէ տեսնել կառավարող երջանակների սպասելիքները: Այս գործում առավելապես ակտիվ է Մեծ Բրիտանիայի մամուլը, որը մեղադրում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հակամարտությունների եւ լարվածության օջախների նկատմամբ կանխակալ վերաբերմունքի մեջ: Լոնդոնին հատկապես անհանգստացնում է Բուտրոս Ղալիի դիրքորոշումը հարավսլավական հանգույցի նկատմամբ: Սերբիայի դեմ կոշտ եւ միակողմանիորեն սուբյեկտիվ վերաբերմունքի հակառակորդները գտնում են, որ Ղալին ի պաշտոնե իրավունք չունի հակվելու առանձին տերությունների կողմից առաջադրվող կողմնակալ կարծիքներին (ԱՄՆ, Գերմանիա), այլ պարտավոր է օգտագործել իր պաշտոնը հակամարտ կողմերի միջեւ երկխոսությունն ապահովելու համար: Նրանք արդարացիորեն գտնում են, որ Ղալին ոչինչ չի անում նախկին Հարավսլավիայի հանրապետություններին առանց երրորդ ուժերի միջամտության բանակցությունների սեղանի շուրջ հավաքելու համար (այդ ուղղությամբ առայժմ նպատակային քայլեր է անում միայն Լոնդոնը): Ընդհակառակը, Ղալիի լուռ համաձայնությամբ երրորդ երկրները միջամտում են հակամարտությանը եւ հետեւողականորեն բորբոքում այն: Դա վերջին արտահայտությունը Սարաեւոյից Գերմանիա երեխաների տեղափոխման փորձն էր, որը ողբերգական հետեւանքներ ունեցավ, պատճառ դառնալով երկու սերբ մանուկների մահվան: Գերմանական կողմն անտեսեց Կարմիր խաչի, ՄԱԿ-ի «կապույտ սաղավարտների» հրամանատարության եւ այլոց նախազգուշացումները ճանապարհին երեխաներին սպառնացող վտանգի մասին: Թե ինչպիսի հետեւանքներ են ունենում նման «ցավալի վրիպումները» լարվածության էպիկենտրոնում, դժվար չէ պատկերացնել: Իսկ Ղալին լռում է:

Երրորդ աշխարհը եւս դժգոհության իր ծանրակշիռ բաժինն ունի Բուտրոս Ղալիի գործունեության նկատմամբ: ՄԱԿ-ում երրորդ աշխարհը ներկայացնող քաղաքական երջանակները գտնում են, որ նա անտեսելով իրենց խնդիրները, անտարբեր, օրինակ, Սոմալիի այնպիսի իրադարձությունների նկատմամբ եւ ուշադրության բեռը դնելով հարավսլավական հանգույցի վրա, քաղաքական պատվեր է կատարում համաշխարհային մեծ տեղաշարժերի այս փուլում, ինչը մեր կարծիքով նախ եւ առաջ կապված է Միջին Արեւելքում արաբա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի հետ: Ղալիի կողմից ուղեգրած *«ոչ մի արաբ իմ անմիջական երջապատում»* սկզբունքն այնքան էլ համոզիչ չէ տարբեր խնդիրների նկատմամբ նրա վերաբերմունքի անկողմնակալությունն ապացուցելու համար:

Այսօր շատերն են գիտակցում միջին Արեւելյան եւ հարավսլավական հանգույցներում իրադարձությունների զարգացման տրամաբանական կապը եւ այն կենսական շահերը, որ հետապնդում են այնտեղ գտնվող երկրները: Աշխարհը համեստորեն լռում է վերը նշված երկու հանգույցների հետ անմիջականորեն առնչվող երրորդ հանգույցի՝ ԼՂՀ-ի խնդրի մասին, որն առավել քան մտահոգիչ է: Ինչեւիցե, Բուտրոս Ղալիին չի հաջողվում հողարկել այն եռանդը, որով նա ծառայում է «նոր աշխարհակարգի» ամերիկյան տարբերակի ձեւավորմանը: Իբրեւ իր ազգային շահերին ծառայող արաբ քաղաքական գործչի, նրան, իհարկե, կարելի է հասկանալ, բայց որպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար, որի առյուծաբեռ աջակցության կարիքն ունեն աշխարհի շատ ժողովուրդներ, նա դժվար թե մեզ գոհացնի: Անշուշտ, «Հայկական հարցը» կարող էր ընդգրկվել այն հոսանքի մեջ, որի հաջողության համար, նույնիսկ վտանգելով սեփական քաղաքական վարկը, ջանք չի խնայում Բուտրոս Ղալին եւ այդ դեպքում մենք կլինեինք խրատաների մյուս կողմում: Սակայն իրողություններն այլ են, բայց դա արդեն մեր ներքին խնդիրն է:

Տ. Հ.

Հայաստանը «երկրորդ Իսրայել». ուրեմն Թուրքիա՞ն որերորդն է

«Թուրքիայի Հանրապետությունը շատ կողմերով բոլորովին հետ չի մնում Իսրայելից: Կիպրոսի բռնագրավումը, հայկական եւ քրդական ցեղասպանությունները, ֆեմալիզմը, սրանց կողքին Իսրայելը եւ սիոնիզմը դժգույն են երեւում», ասում է թուրքական եւ քրդական ծախակողմյան մամուլի ներկայացուցիչը:

Թուրքական մամուլը եւ հասարակական կարծիքը հաճախ են հոլովում *«Հայաստանը երկրորդ Իսրայել»* արտահայտությունը: Այն շահարկվում է որոշ ծախակողմյանների կողմից, վախեցնելով, թե դա *«Թուրքիայի գլխին մի օր փորձանք է դառնալու»:* Չնայած վերջիններս Թուրքիայում չնչին, ընդամենը 5 տոկոս են կազմում, այնուամենայնիվ հետաքրքիր է նրանց կարծիքը:

Գերմանիայում հրատարակվող *«Յենի Ույլֆ»* շաբաթաթերթն ուշադրություն է դարձրել այս հանգամանքի վրա եւ իր հունիսի 21-27-ի համարում հրապարակել *«Ազգի-հայ հակամարտությունը եւ հեղափոխական կեցվածք»* վերնագրով մի հոդված, որ հոդվածագիր Մ. Ջան Յուջեն ընդգծում է Թուրքիայի վարած «պանթուրքիստական» քաղաքականությունը եւ որոշ ձախ քաղաքական հոսանքների՝ ժամանակ առ ժամանակ «Հայաստանը երկրորդ Իսրայել է» մտավախությունները:

Սնորեւ բարգմանաբար ներկայացնում ենք որոշ հատվածներ այդ հոդվածից:

«Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին խորհրդային տարածքում սկսված ազգային տարաձայնությունները վերածվեցին արյունալի ընդհարումների: Ազգի-հայ հակամարտությունները Լեռնային Ղարաբաղում եւ Նախիջեւանում շարունակվում են հայերի գերակշռությամբ: Այդ հակամարտություններում Թուրքիան ցուցաբերում է բավական ազդու կեցվածք, դա հիմնավորելով «ցեղակցության», «պանթուրքիզմի» եւ «նեոօսմանականության» կարգախոսներով: Ազգի-հայ հակամարտությունն առաջատար տեղ է գրավում թուրքական արտաքին քաղաքականությունում: Այն այսօր մտել է Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ եւ որոշ չափով ազդում է նաեւ ձախակողմյան երջանակների վրա, պարտադրելով նրանց հատկ դիրքորոշում ունենալ այս հարցում:

Հիշյալ հակամարտությունում ով ինչքա՞ն է իրավաց. ո՞ւմ պետք է աջակցել եւ այլ հարցադրումները մեզ համար շատ էլ կարեւոր չեն:

Մեզ համար առաջին հերթին էականն այն է, որ շատ զգույշ լինենք եւ չտրվենք վերջերս բավականին ծավալառաջաց ախտրշակ ցուցաբերող Թուրքիայի քաղաքականությանը:

Հաճախ լսում ենք «երկրորդ Իսրայել» խոսքերը: Եթե չենք սխալվում, այս խոսքը «մեր» ծախակողմյաններից է ծնունդ առել: «Երկրորդ Իսրայել» ասելով՝ նկատի ունեն Հայաստանը: Այս առթիվ նշենք, որ մեր կողմնակիցների կատարած որակումները կամա թե ակամա նշանակում են եւ գաղափարական, եւ քաղաքական աջակցություն թուրքական ազգայնամոլությանը:

Իրոք, Հայաստանը համագործակցում է եւ պիտի շարունակի համագործակցել իմպերիալիզմի հետ: Մեր օրերում արդյոք քանի՞ երկիր են մնացել, որ չեն համագործակցում իմպերիալիզմի հետ: Սակայն բոլոր այդ երկրները, չգիտես ինչու, չեն որակվում որպես «երկրորդ Իսրայել»:

Մինչդեռ «երկրորդ Իսրայել»ը վաղուց ասպարեզում է: Սա ոչ թե ենթադրություն է, այլ իրականություն: Ուստի ուրիշ տեղեր «երկրորդ Իսրայել» որոնելու հարկ չկա, արդեն մենք ապրում ենք հենց այդ «երկրորդ Իսրայելում» (այսինքն՝ Թուրքիայում – խմբ.): Սա բոլոր տեսակետներից է այդպես:

Թուրքիայի հանրապետությունը շատ կողմերով բոլորովին հետ չի մնում Իսրայելից: Կիպրոսի բռնագրավումը, հայկական եւ քրդական ցեղասպանությունները, ֆեմալիզմը, սրանց կողքին Իսրայելը եւ սիոնիզմը դժգույն են երեւում: Թուրքիան իմպերիալիզմի հետ ունեցած կապերով էլ հետ չի մնում Իսրայելից: Աշխարհի նոր կարգավիճակի շրջանի ամենակարեւոր այսներից մեկը Թուրքիայի Հանրապետությունն է լինելու: Շատ լավ գիտենք, թե ինչպես Թուրքիան Ծոցի պատերազմի ժամանակ եւ տակավին մինչեւ այսօր դարձավ Ամերիկայի հարձակողական-ռազմական շտաբներից մեկը: Այս իրականության լույսի տակ «երկրորդ Իսրայել» որոնելը եթե աներեսություն չէ, ապա պարզապես կեղծավորություն է:

Երբ հրապարակում վաղուց «երկրորդ Իսրայել» գոյություն ունի, հանուն ծախակողմության «երկրորդ Իսրայել» ուրիշ տեղ որոնելը առնվազն քաղաքական սխալ կլինի:

Կարելի էր հարց տալ. եթե շրջանում գոյություն չունենար Թուրքիայի նման «երկրորդ Իսրայել», իսկական Իսրայելն արդյոք որքա՞ն կարող էր գոյատեւել»:

Պատրաստեց
ՐԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍԸ

digitised by A.R.A.R.@

Իրանա-բրիտանական հարաբերությունները կրկին լարվում են

Ըստ լրատվական գործակալությունների, մոտավորապես 2-3 շաբաթ առաջ, Իրանի կառավարությունը Թեհրանում Անգլիայի դեսպանատան երրորդ քարտուղարից պահանջել է մեկ ամսվա ընթացքում հեռանալ Իրանից՝ այդ քայլը բացատրելով երկրի անվտանգության ապահովության նկատառումներով: Այս դեպքին անմիջապես հետևեց Անգլիայի պատասխան քայլը: Անգլիայի կառավարությունը հայտարարեց, որ Իրանի երեք քաղաքացիներ (որոնցից 2-ը Լոնդոնում Իրանի դեսպանատան աշխատողներ են, մեկը՝ ուսանող) պետք է հեռանան երկրից: Այս իրադարձությունները երկու երկրների միջև հարաբերությունների վատացման նոր ալիքի վկայությունն են: Այս կապակցությամբ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի պարսկերեն հաղորդումների խմբագրությունը հարցազրույց է անցկացրել Իրանի հանրածանաչ գրող-հրապարակախոս, լրագրող Ամիր Թահերիի հետ, որն այժմ ապրում եւ ստեղծագործում է Փարիզում: Հարցազրույցը որոշ կրճատումներով կներկայացնենք ձեր ուշադրությանը, սակայն մինչ այդ անհրաժեշտ ենք համարում նշել կարեւոր թվացող որոշ նկատառումներ:

Մինչ Անգլիայի դեսպանատան երրորդ քարտուղարին Իրանից հեռացնելը, անգլիական բարձրաստիճան պաշտոնատարներից կազմված մի պատվիրակություն պետք է ժամաներ Թեհրան՝ երկու երկրների միջև տարբեր բնագավառներում փոխհարաբերությունների ընդլայնման հարցով բանակցություններ վարելու նպատակով: Սակայն Իրանի համար թերեւս անսպասելիորեն այդ այցելությունը չեղյալ հայտարարվեց: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառը Իրանի վրա Արեւմուտքի ճնշման ուժգնացումն է: Հենց դա է առաջացուցել Անգլիայի արտգործնախարարության կիսապաշտոնական հայտարարությունը, ուր այդ քայլին դիմելու համար երեք պատճառաբանություն է բերվում, որոնցից մեկը Սալման Ռուշդիի հարցը կրկին վերհանելն է: Ամիր Թահերին դա գնահատել է որպես սադրանք Անգլիայի կողմից Իրանի նկատմամբ: Հիշեցնենք նաեւ, որ վերջերս Իրանի արտգործնախարարի եւրոպայի եւ Ամերիկայի հարցերով տեղակալ պրն. Վայեզին իր հարցազրույցներից մեկի ժամանակ պատասխանելով այն հարցերին, թե ինչ մակարդակի վրա են գտնվում իրանա-անգլիական հարաբերությունները եւ ինչո՞ւ չիրականացավ այն որոշումը, ըստ որի պետք է երկու երկրների միջև հարաբերությունները ընդլայնվեին դեսպանի մակարդակով, նշել է. *«Մեր բանակցություններն անգլիացիների հետ երբեք դեսպանների փոխանակման մասին չեն եղել: Մեր համաձայնությունները եղել են միայն հավատարմատարների մակարդակով: Իսկ ինչ վերաբերում է Սալման Ռուշդիի հարցին, մենք անգլիացիներին հստակորեն ասել ենք, որ նրա վերաբերյալ առաջնորդի վճիռը երբեք եւ ոչ մի հանգամանքում չի կարող թեկուզ չնչին փոփոխության ենթարկվել: Սա է մեր արտգործնախարարության հստակ եւ պարզ դիրքորոշումը: Այդ հարցում մեր ժողովրդին ուրիշ ասելիք չունենք: Մենք նման դիրքորոշման մասին տեղյակ ենք պահել անգլիական պաշտոնատարներին նրանց հետ ունեցած մեր մեկուսի, դռնփակ բանակցությունների ժամանակ: Այժմ եթե Անգլիան, մեր դիրքորոշմանը ծանոթ լինելով հանդերձ, ցանկանում է երկու երկրների միջեւ հարաբերությունների ընդլայնման ուղղությամբ ինչ-որ քայլեր կատարել, ապա մեր կողմից համապատասխան քայլեր կձեռնարկվեն: Իսկ եթե նրանք ակնկալում են որեւէ ծկռունություն այդ վճռի կապակցությամբ՝ այն մեղմացնելու առումով, ապա պետք է հավատացնենք, որ այդ օրը երբեք չի գա»:* Ուրեմն, այսպիսով ժխտվում է նաեւ փակ դռների հետեւում կայացած համաձայնության տարբերակը:

Մեր կարծիքով, նույն ձեւով կարելի է գնահատել նաեւ Աբու Մուսա կղզու խնդրի առաջքաշումը: Այդ հարցի նկատմամբ նման վճռական դիրքորոշումը հօգուտ արաբների երկու նպատակ է հետապնդում. նախ, Պարսից ծոցի ավազանի երկրներին ներկայանալ որպես հովանավոր եւ համոզել, որ նրանք Ամերիկայի կողքին նաեւ Անգլիայի բարեկամության կարիքն ունեն, որի հետ կա նաեւ պաշտպանության պայմանագիր: Բնականաբար հարց է ծագում. ինչո՞ւ Անգլիան հանկարծ հենց այդ ժամանակահատվածում հիշեց իր մեծ «առաքելության» մասին: Պատասխանը միանշանակ է՝ այն պարզ պատճառով, որ վերջին ժամանակներս Իրանի եւ ծոցի երկրների միջեւ հարաբերությունները տարբեր բնագավառներում մեծապես զարգացել եւ ընդլայնվել են: Այդ հարցը բարձրացնելու գլխավոր նպատակը գործընթացը կանխելն ու նրանց միջեւ բարիդրացիական հարաբերությունները հարվածի տակ դնելն է: Պետք է նշել, որ այդ քայլը արդյունք չանցավ: Օրինակ, որոշ փոխայցելություններ ծրագրեր անորոշության են մատնվել:

Ինչ վերաբերում է Սալման Ռուշդիին, չխորանալով հարցի էության մեջ, կարելի է ասել, որ դա խաղաթղթերի մարդու իրավունքների «մեծ պաշտպանների» ձեռին, պաշտպանություն, որը մենք մեր մաշկի վրա ենք զգացել երկար ու ծիգ չորս տարիների ընթացքում՝ հանձին Լեռնային Ղարաբաղում մարդու ամենատարրական իրավունքների կոպիտ ոտնահարման: Եւ այժմ այդ խաղաթղթի խաղարկման ամենապատեհ ժամանակն է: Այլապես ինչով բացատրել այն հանգամանքը, որ դեռ 4-5 ամիս առաջ թվում էր, թե աշխարհն ընդհանրապես մոռացել է այդ հարցը: Սակայն այսօր Ռուշդին հրավիրվում է Անգլիայի պալատներ եւ իր ելույթներով եւրոպական տարբեր երկրներում՝ Դանիայում, Նիդեռլանդներում, այժմ էլ՝ Իսպանիայում, պահանջում է այդ երկրներից, որ Խոմեյնիի վճիռը չեղյալ հայտարարելու համար Իրանի վրա ճնշում գործադրեն: Անգլիայի պալատներից որոշ անդամներ, ինչպես նաեւ Ամերիկայի մի խումբ կոնգրեսականներ հովանավորում են «Մոջահեդինե Խալք» կազմակերպությանը, որի ահաբեկչական գործողություններին Արեւմուտքը քաջածանոթ է: Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում այդ կազմակերպությունը Սադդամի կողքին զենքն ուղղել էր հարազատ ժողովրդի դեմ:

Այս ամենը վկայում են այն մասին, որ Արեւմուտքը Իրանի վրա ճնշումը ուժեղացնելու միտում է հանդես բերում:

ԷՄՍ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

– Պրն. Թահերի, մի քանի շաբաթ առաջ էր, որ Մեծ Բրիտանիայի բարձրաստիճան մի դիվանագետ այցելեց Իրան՝ բանակցություններ վարելու Իրանի պաշտոնական շրջանակների հետ երկու երկրների միջեւ փոխհարաբերությունների բարելավման եւ ընդլայնման հարցի կապակցությամբ: Այդ այցելությունը չեղյալ հայտարարվեց եւ միաժամանակ մի քանի ժամով ձերբակալվեց Թեհրանում անգլիական դեսպանատան դիվանագետներից մեկը: Սակայն Անգլիայի կառավարությունը միայն հենց մի քանի օր առաջ բողոքարկեց այդ դեպքի կապակցությամբ: Այս իրադարձությունների վերաբերյալ ի՞նչ փաստարկներ կան: Ձեր կարծիքով այդ երկու հարցերը փոխկապակցվա՞ծ են միմյանց եւ ո՞րն է Իրանի «վրդովմունքի» պատճառը Բրիտանիայի հանդեպ եւ ընդհակառակը:

– Բարձրաստիճան դիվանագետը, որը պետք է Իրան այցելեր, Անգլիայի արտգործնախարարության Միջին Արեւելքի բաժնի վարիչն էր: Այս առիթով Անգլիայի արտգործնախարարությունը մամուլի համար արած կիսապաշտոնական հայտարարության մեջ երեք պարագաներով էր պայմանավորել նման քայլը: Առաջին, ենթադրություններ, ինչպես նաեւ վկայություններ կան, որ Իրանի կառավարությունը մասնակցում է միջազգային ահաբեկչական գործողություններին եւ դա հակառակ է Իրանի պաշտոնական շրջանակների եւ հատկապես արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթիի անգլիական պաշտոնատարներին տված խոստումներին: Երկրորդ, դա կապված է Աբու Մուսա կղզու հարցի հետ: 1971 թ. առաջ եւ նախքան անգլիական ուժերի դուրս բերումը Պարսից Ծոցից, Իրանի եւ Անգլիայի միջեւ ստորագրվել է մի պայմանագիր, համաձայն որի Շարջեի էյխան իր հայեցողությամբ կարող էր ցանկացած մարդուն որպես բանվոր ուղարկել այդ կղզին: Սակայն վերջերս Իրանի կառավարությունը բավականին թվով մարդկանց հեռացրեց այդ կղզուց՝ առաջ բերելով Անգլիայի, որն այդ պայմանագրի երաշխավորն է, դժգոհությունը: Քանզի նա ցանկանում է, որ Իրանը հավատարիմ մնա ստորագրված պայմանագրին: Երրորդ հանգամանքը, որը որոշ իմաստով ավելի կարեւոր է նախորդ երկուսից, վերաբերում է Այաթոլլա Խոմեյնիի որոշմանը, ըստ որի ծագումով հնդիկ անգլիացի գրող Սալման Ռուշդին մահապատժի է դատապարտված: Այս հարցի վերաբերյալ Իրանի եւ Անգլիայի միջեւ վարագույրների հետեւում բազմաթիվ բանակցություններ են տեղի ունեցել:

– Իրանցիները տարբեր առիթներով խոստացել են, որ կաշխատեն գտնել այդ վճիռը չեղյալ հայտարարելու համար որեւէ ելք: Այդ բանաձեւն առաջարկվել էր եւ պետք է ի կատար ածվեր: Սակայն հանկարծակի, թերեւս երկրի ներսին քաղաքականության պատճառով, Իրանի պաշտոնական շրջանակները, այդ թվում նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության հեղափոխության առաջնորդ պրն. Խամենեին հայտարարեց, որ Այաթոլլա Խոմեյնիի վճիռն ուժի մեջ է եւ պետք է կատարվի: Այսպես ասած, սա վերջին կաթիլն էր, որը լցրեց Անգլիայի համբերության բաժակը: Մինչեւ այս դիպվածը, Անգլիան աշխատում էր բարելավել իր հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Նույնիսկ մոտավորապես երկու տարի առաջ էր, որ Անգլիան նորոգեց իր հարաբերությունները Իրանի հետ: Այս ամենով հանդերձ, ըստ ձեզ, ի՞նչ ուղղությամբ են զարգանում հարաբերությունները:

– Ես կարծում եմ, որ այս ամենի հետեւում ընկած է Անգլիայի կառավարության վերլուծությունը Իրանի վիճակի վերաբերյալ: Բնականաբար, նախքան Իրանի վերջին ընտրությունները, Անգլիայի կառավարությունը, ինչպես նաեւ Արեւմտյան շատ պետություններ եւ արեւմտյան մեկնաբաններից շատերն այն կարծիքին էին, որ Իրանի նախագահ պրն. Ռաֆսանջանին իսլամական մեջլիսում մեծամասնություն ձեռք բերելուց հետո, երկիրը նոր հունի մեջ դնելով կսկսի քաղաքական եւ տնտեսական բարեփոխումները: Եւ ընդհանուր առմամբ Իրանի իրավիճակը բարելավելով, նրան կվերադարձնի միջազգային հասարակայնությանը: Սակայն այս վերլուծությունը ներկայումս փոխվել է: Եւ ընդունված է այն տեսակետը, որ թեպետ ծայրահեղականների մեծ մասը մեջլիսից դուրս մնաց, բայց այնուամենայնիվ մեջլիսը Ռաֆսանջանին չի վերահսկում: Թեեւ նրա կողմնակիցները շատ են մեջլիսում, սակայն կան նաեւ այլ խմբավորումներ: Բացի դրանից, Ռաֆսանջանին լայնածավալ բարեփոխումների համար անհրաժեշտ ուժ, անհատականություն չի դրսեւորել: Ուրեմն, Իրանի հարցում դեռ պետք է չշտապել եւ տեսնել, թե որտեղ է գտնվելու քաղաքական ուժերի կիզակետը եւ երբ նորընտիր մեջլիսը կանցնի իր բուն աշխատանքին եւ պրն. Ռաֆսանջանին ներկայացնի իր կառավարության նոր կազմը: Իրականում, նա ընդամենը 7-8 ամիս ժամանակ կունենա, քանի որ հաջորդ տարի ամռանը նախագահական նոր ընտրություններ են անցկացվելու, ուստի Իրանն իր ներկա վիճակում Արեւմուտքի մեկնաբանների դիմաց կանգնած է մի մեծ հարցականով: Վերջին շրջանում Իրանի տարբեր քաղաքներում տեղի ունեցող հուզումները, ինչպես նաեւ որոշ չափով կարեւոր գործադուլներն Իրանի նավթարդյունաբերության մեջ պատճառ դառնան, որ Ճապոնիան բավականաչափ կրճատի Իրանից գնվող նավթամթերքի քանակը, երկրի արտահանումների բնագավառում խանգարումներ առաջացան: Այդ բոլոր փաստերն ու վկայությունները հիմք են ծառայում, որպեսզի Արեւմուտքում մտածեն, թե Իրանի իրավիճակը դեռեւս անորոշ է: Ուստի, նրանց այն վերլուծությունը, որ հիմնված էր Ռաֆսանջանիի բարեփոխումների վրա, առնվազն մինչեւ հաջորդ ամառ գործածության մեջ չի մնի:

– Այս իրավիճակում տնտեսական հարաբերություններն ի՞նչ դեր ունեն: Թվում էր, թե Անգլիայի կառավարությունը տնտեսական եւ առեւտրական շրջանակների ճնշման տակ վերջերս աշխատում էր Սալման Ռուշդիի հարցի շուրջ աղմուկը «մեղմացնել»: Սակայն Անգլիայի պառլամենտի մի խումբ պատգամավորներ կառավարությունից պահանջեցին, որ այդ հարցին ամենայն «լրջությամբ» վերաբերվի: Այս հարցը եւ այն, որ պառլամենտի որոշ անդամներ պաշտպանել են «Մոջահեդին Խալք» կազմակերպությանը, ի՞նչ ազդեցություն են ունեցել իրանա-անգլիական հարաբերությունների վրա:

– Տնտեսական փոխհարաբերությունների առումով, իհարկե, Անգլիան շահագրգռված է դրա ընդլայնմամբ, սակայն ներկայումս Իրանի մեծաքանակ գնումների համար բավական կանխիկ դրամ չունի: Ուրեմն Իրանի հետ առեւտրական հարաբերությունները պայմանավորված են երկարաժամկետ վարկով, մյուս կողմից էլ, քանի դեռ Իրանի քաղաքական աղագան պարզ չէ Արեւմուտքի համար, ոչ մեկը պատրաստ չէ նրան երկարաժամկետ վարկ տրամադրել: Պրն. Ռաֆսանջանին առայժմ սառում է, թե ինքը պատրաստ է երկրի տնտեսությունն ազատ ռելսերի վրա դնել եւ տնտեսական վերակառուցում անցկացնել: Բայց դեմ է քաղաքական վերափոխումներին: Այլ խոսքով, նա չի ցանկանում դառնալ Իրանի Գորբաչովը, այլ նախընտրում է չինական տարբերակը: Իսկ ինչ վերաբերում է Սալման Ռուշդիի հարցին, ըստ իս, դա Անգլիայի կողմից սադրիչ քայլ էր, իսկ նրան պառլամենտ հրավիրելը՝ լիակատար բնականացնում այդ հարցը կրկին բարձրացնելու համար: Մինչդեռ Անգլիան հստակ գիտակցում էր, որ ոչ պրն. Ռաֆսանջանին եւ ոչ էլ պրն. Խամենեին քաղաքական այն ուժը չունեն, որ Խոմեյնիի վճիռը բացահայտորեն չեղյալ հայտարարեն, որովհետեւ Իրանի Իսլամական Հանրապետության համակարգը հենված է առաջնորդի անսխալականության տեսության վրա: Եւ եթե բացահայտորեն հայտարարվի, որ նա մի հարցում սխալվել է, նրա բոլոր վճիռները, իրավունքները եւ անհատականությունը հարցականի տակ կդրվեն: Այսինքն, երբ Իրանի պաշտոնատարներից պահանջվում է այդ վճիռը պաշտոնապես չեղյալ հայտարարել, դա նշանակում է նրանցից պահանջել քաղաքական ինքնասպանության դիմել: Ըստ իս, այդ հարցի խելացի լուծումն այն էր, որ թույլ տային անաղմուկ դուրս գալ բանբերեմից: Սակայն ինչպես նշվեց, քանի որ Անգլիայի հին վերլուծությունները ճիշտ դուրս չեկան, այդ իսկ պատճառով հարցն ամենայն արագությամբ Անգլիայի կողմից կրկին առաջ քաշվեց: Եւ պահանջում են, որ այդ վճիռը հրապարակորեն ժխտվի, այսինքն, Իրանի Իսլամական Հանրապետությունը պաշտոնական հայտարարության միջոցով չեղյալ հայտարարի Խոմեյնիի վճիռը: Մի բան, որ վեր է Իրանի Իսլամական Հանրապետության ուժերից:

■

Եգիպտոսն անհանգստացած զենքի ներհոսքից

Եգիպտոսը Սուդանից, Լիբիայից, Չադից եւ Իսրայելից պահանջեց համագործակցել իր հետ տարբեր անցումակետերով դեպի Եգիպտոս զենքի ներթափանցումը արգելելու կաղակցությամբ, քանի որ դրանք անցնում են ահաբեկչական խմբավորումների անդամների ձեռքը, որոնք կրոնական ոգի տակ ուժային մեթոդներ են գործադրում:

Եգիպտական իշխանությունները Խարթումի հասարակապետական գերատեսչություններին հանձնել են հարցեր, որոնք լուսաբանում են գոկտոր Հասան Ալ-Թուրաբիի ղեկավարությամբ «Ազգային-իսլամական ճակատ»-ի պատկանող զորավարժությունների ճամբարների վայրերը: Այս ճամբարներում ընդգրկվում են փախստական եգիպտացիներ, որոնց նկատմամբ դատավճիռներ են կայացվել: Կահիրեն Սուդանի կառավարությունից պահանջեց նաեւ կասեցնել յուրաքանչյուր գործողություն, որը սպառնում է Եգիպտոսի անվտանգությանը:

Կահիրեի եւ Թեհրանի միջեւ մերձեցում

Ակնկալվում է, որ շուտով դիվանագիտական փոխանակում կկատարվի Կահիրեի եւ Թեհրանի միջեւ այն բանից հետո, երբ եգիպտացի մի դեսպանորդ արտգործնախարար Ամր Մուսայից իր իրանցի պաշտոնակից Ալի Աքբար Վելայաթիին փոխանցեց մի նամակ երկկողմանի հետաքրքրությունների եւ երկու երկրների միջեւ հարաբերությունների նորմալացմանն ուղղված միջոցառումների շուրջ կարծիքների փոխանակման համար:

Այս առաջխաղացումը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ երկու կողմերի միջեւ սկսվեցին գաղտնի շփումներ, որոնք հետագայում բացահայտ դարձան: Ըստ առաջին տպավորության, ավելի բարձր մակարդակի դիվանագիտական ներկայացուցչության հաստատում եւ կոնկրետ քայլերի ձեռնարկում հարաբերությունները զարգացնելու եւ փոխադարձ այցելություններ ու պատվիրակություններ փոխանակելու երկու երկրների միջեւ, որը կնպաստի տարբեր բնագավառներում հարաբերությունների ամրապնդմանը:

■

Տաջիկստանը շահագրգռված է համագործակցել Իսրայելի հետ

Օգոստոսի 3-ին Դուշանբեում տեղի ունեցավ Տաջիկստանի նախագահ Ռահմոն Նաբիեւի հանդիպումը Սոսկվայում Իսրայելի դեսպան Արյե Լեւինի հետ: Զրույցի ժամանակ նախագահը հայտարարեց, որ Տաջիկստանը շահագրգռված է ներգրավել Իսրայելի տնտեսական հզորությունը ճգնաժամը հաղթահարելու համար: Արյե Լեւինը նշեց, որ Իսրայելում պատրաստվում է մասնագետների խումբ, որը կժամանի Տաջիկստան տնտեսության վիճակը վերլուծելու եւ հեռանկարային ծրագիր մշակելու համար: Դեսպանի խոսքերով, Իսրայելը նաեւ պատրաստ է ուսանելու հրավիրել մի քանի տաջիկ ուսանողների, որոնք կստանան տարբեր մասնագիտություններ, այդ թվում նաեւ գյուղատնտեսական:

Հանդիպմանը ներկա էր Տաջիկստանում Իսրայելի գործերի ժամանակավոր հավատարմատար Իոսիֆ Բեռ Լուրը:

■

Տաջիկների համաշխարհային համաժողով

Տաջիկստանի անկախության օրը, սեպտեմբերի 9-ին, կբացվի տաջիկների համաշխարհային համաժողովը: Այդ ներկայացուցչական հանդիպմանը կմասնակցեն աշխարհի տարբեր երկրներում բնակվող տաջիկները, այդ թվում հայտնի գիտնականներ, բանաստեղծներ, գրողներ, պետական գործիչներ, գործարար մարդիկ: Տոնահանդեսի ծրագրով նախատեսվում են գործարար հանդիպումներ, գիտական սեմինարներ, ինչպես նաեւ բազմազան մշակութային միջոցառումներ, այդ թվում տաջիկպարսկական պոեզիայի դասական Ֆիրդուսիի հուշարձանի բացումը:

■

digitised by A.R.A.R.@

Թե ինչպե՞ս փրկվեց կենդանաբանական այգին

«Քլիկա եւ Դիմնա»ն հիրավի համարվում է աշխարհում հնագույն եւ ամենահայտնի գիրքը, ուր զետեղված են կենդանիների լեզվով շատ հետաքրքիր եւ ուսանելի պատմվածքներ: Այս գիրքը վեցերորդ դարում, Սասանյանների ժամանակաշրջանում, սանսկրիտից թարգմանվել է միջին պարսկերեն, ապա ութերորդ դարում պարսիկ գիտնական, թարգմանիչ Իբն Ալ Մուքֆֆան այն թարգմանել է արաբերեն, որից էլ թարգմանվել է աշխարհի տարբեր լեզուներով:

Գիրքը ներշնչանքի աղբյուր է հանդիսացել շատ գրող-բանաստեղծների համար: Հայ գրականության մեջ Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը» այս ոճի փայլուն օրինակներից է: Այս ոճի վերջին ներկայացուցիչներից կարելի է համարել անգլիացի հայտնի գրող Ջորջ Արվելին՝ «Կենդանիների ամրոց» գրքի հեղինակին:

Սակայն, որքան մեզ հայտնի է, դեռեւս ոչ մի լրագրող այդ ոճով տեղեկատվություն չի կազմել: Դրա նախաձեռնողը կարելի է համարել բելգիացի մի լրագրողի, որը «Ռոյթըր» գործակալությունից ստացված կարճ տեղեկությունը շարադրել է հետեւյալ կերպ, որը թարգմանաբար ձեզ ենք ներկայացնում:

«Պինգվինները հանգիստ շունչ քաշեցին, որովհետեւ մեկ շաբաթ էր կենդանաբանական այգու պահակը մոտենում էր նրանց եւ այցելությունը ընթանում էր վշտալի լռության ներքո, քանզի բոլորը գիտեին, որ մի քանի օր եւս՝ եւ վրա կհասնի մեծ բաժանումի ժամը, խեղճ մարդը կկորցնի իր աշխատանքը, իսկ իրենք՝ իրենց աղահով տեղն ու կանոնավոր կուտջուրը:

Լոնդոնի կենդանաբանական այգին, որն աշխարհում հնագույններից է, բյուջեի պակասի պատճառով ստիպված է փակել դռները: Այցելուների թիվն օրըստօրե նվազում է: Այս կենդանաբանական այգի, որը հիմնադրվել է դեռեւս 1826 թվականին, 70-ական թվականներին այցելողների միջին թիվը հասել էր երեք միլիոն մարդու: Մինչդեռ 1992 թ. համար ենթադրվում է 800 հազար այցելու: Մի կողմից կառավարությունը մերժեց կենդանաբանական այգու ղեկավարությանը ֆինանսական օգնություն ցույց տալու խնդրում, մյուս կողմից էլ երկար եւ անվերջանալի բանավեճեր էին շարունակվում կենդանաբանական այգին իր ավանդական ձեւով պահպանելու կողմնակիցների եւ նրանց միջեւ, ովքեր առաջարկում էին այն դարձնել բնական զբոսայգի:

Կենդանաբանական այգու բոլոր կենդանիները լավատեղյակ էին այս բոլոր անցուդարձերին, վիճակագրական տվյալներին ու բոլորին: Վերջին ամիսների ընթացքում կենդանաբանական այգու պահակը կենդանիների վանդակներն ու տաղավարները կատարած իր ամենօրյա այցելությունների ընթացքում նրանց ամենայն մանրամասնությամբ հաղորդում էր բոլոր նորությունները: Իսկ այդ լուրերի բովանդակությունը գնալով ավելի ու ավելի հուսահատական էր դառնում: Ի վերջո, կենդանիները խորը վշտով ու ափսոսանքով տեղեկացան, որ այլեւս փրկության հույս չկա եւ որ մեկ շաբաթ հետո կենդանաբանական այգին փակվելու է...

Այնուամենայնիվ, հունիսի 9-ին, ուրբաթի օրը, երբ պահակը այցելեց պինգվիններին, շատ ուրախ ու զվարթ տրամադրություն ուներ եւ ներս մտնելուն պես գիրքը բացելով գոռաց. *«Տղաներ, աշխալուսանք, կենդանաբանական այգին փրկված է»:* Պինգվինները չհավատալով, երկու ոտի վրա բարձրանալով աչքերը հառեցին միմյանց եւ նրանցից մեկն ասաց. *«Ծերուկը խելքը թոցրել է»:*

Պահակը բացասաբար գլուխը շարժելով ասաց. *«Չեր արեւը վկա, ո՛չ... Կենդանաբանական այգու ղեկավարության խորհրդաժողովի ժամանակ հենց անձամբ ինքը՝ սր Ջոն Շափելը մեկ միլիոն Ֆունտ ստեռլինգանոց մի չեկ ցույց տվեց նրանց, որն ստորագրել էր փրկարար հրեշտակը»:* Աֆրիկյան թութակը, որ հեռվից լսում էր այս խոսակցությունը, բարձրաձայնելով թեւերը ավելի մոտ եկավ նրանց, նստեց եւ հեգնանքով ասաց. *«Փրկարար հրեշտակ... էլ ի՞նչ կուզեիք... արդեն վաղուց է, ինչ երկնքի հրեշտակները որոշել են, որ այլեւս ոչ մի հոգեւոր չդնեն այս անիծյալ կողքին: Եւ ընդհանրապես այն ժամանակվանից ի վեր, երբ այդ «Մագին» (Մարգրեթ Թեչերը), ես նրա ինչն եմ ասել...»:* Այդ պահին պահակը գայրույթով ընդհատեց նրան ու ասաց. *«Ախրդիր բերանդ փակիր, կենդանաբանական այգում քաղաքական բոլոր տեսակի հակումների դրսեւորումը արգելված է... Եւ ընդհանրապես ո՞վ է խոսել երկնային հրեշտակների մասին, ես խոսում եմ երկրային հրեշտակի, այսինքն նորին մեծություն Շեյխ Զաքերի... Քուվեյթի էմիրի մասին, պա՞րզ է»:*

Եւ բոլորի հայացքները ուղղվեցին դեպի երկսայրատանի ուղղը, ինչ նա պատկառանքով ասաց. *«Բոլորդ ինձ նայեք, շատ վաղուց է, ինչ ես այն կողմերում չեմ եղել... Իմ վերջին տեղեկությունը նախնիներիս երկրից պատերազմի մասին է, 72 երկրի պատերազմի. Պարսից ծոցի պատերազմի մասին»:*

Պահակն ասաց. *«Դե իհարկե, այս առաստաղներն էլ հենց այդ պատերազմի շնորհիվ են: Չէ՞ որ նախագահ Բուշը ասել էր, թե այս պատերազմով վերջ կդրվի աշխարհում անարդարությանը եւ ագրեսիային, որին կհետեւի նոր աշխարհակարգի հաստատումը»:*

Առավասիկ:

Իսկ աղացույց... Սր Ջոնը պատմեց, որ երբ Ջաբերին ասել էին, թե Անգլիայի կառավարությունը չի կարող լրացուցիչ ֆինանսական օգնություն ցույց տալ Լոնդոնի կենդանաբանական այգուն: Նորին մեծության շեյխի աչքերից արտասուք է հոսել եւ նա ասել է. *«Դա հենց Մարգրեթ Թեչերն է, որ Բուշին ասել է, թե ինչ գնով էլ լինի, պետք է բռնել Սադդամի պոչից եւ դուրս շպրտել նրան Քուվեյթից...*

Ուրեմն, անգլիացիները մեր դրժբախտության պահին մեզ մենակ չեն թողել, ինչպե՞ս կարող ենք մենք հիմա դիտորդի դերում նստել եւ տեսնել, թե ինչպես են Լոնդոնի կենդանաբանական այգու գազանները դառնում բախտաբերջիկ եւ փախստական: Ո՛չ, Աստված իմ, ինչ գնով էլ լինի, պետք է փրկել Լոնդոնի գազանանոցը»: Եւ անմիջապես մեկ միլիոն ստեռլինգանոց չեկը ստորագրեց եւ երեկ այն Լոնդոնում Քուվեյթի դեսպանի միջոցով հանձնեցին Ջոն Շափելին:

Այդ ժամանակ կիսդրոսցի երկարականջն ասաց. *«Մենք էլ ծնվել ենք, էլ էլ կմեռնենք, բայց երբ ուզում եք ճշմարտությունն իմանալ, ես այս մարդկանց գործից գլուխ չեմ հանում: Հենց մի քանի օր առաջ էր, ինչ կենդանաբանական այգու այցելուներից մեկն իր ընկերոջ հետ զրուցելիս, այս երկար ականջներովս լսեցի, ասում էր. «Տրե՛ն. Բուշը ասել է, թե ինչ էլ որ պատահի, երբեք ոչ մի ամերիկացի զինվոր Բոսնիա չի ուղարկի, մինչդեռ Քուվեյթի պատմությունը»*

Պահակը բղավեց. *«Ավանակ, միթե ես չասացի, որ քաղաքական բոլոր տեսակի կարծիքների արտահայտումը կենդանաբանական այգում արգելված է...»:*

Պատրաստեց ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆԸ

Աշխարհի եռակի չեմպիոնը հրավիրված է Հունաստան

Մեր թերթի խմբագրության հասցեով հեռագիր է ստացվել Հունաստանից, որում ասվում է, թե շախմատի օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, երեւանցի միջազգային գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը պաշտոնապես հրավիրվում է մասնակցելու Հունաստանի Շալգիդիկի քաղաքում կայանալիք շախմատի միջազգային երկրորդ փառատոնին, որը կանցկացվի 1992 թ. սեպտեմբերի 1-ից 14-ը:

Շալգիդիկիի քաղաքապետ Վասիլիոս Վասիլակիսի օգոստոսի 3-ի պաշտոնական հրավերում նշվում է, թե *«պիտի փորձենք անել ամեն բան, որպեսզի հարգելի վարպետը կարողանա մասնակցել միջազգային այս մրցաշարին»:*

Պաշտոնական հրավերում ասվում է նաեւ, որ եթե աշխարհի եռակի չեմպիոնը չցանկանա որպես մարզիկ մասնակցել այս մրցաշարին, ապա կարող է ներկա լինել որպես հյուր, երկու շաբաթվա ընթացքում հանդես գալով մեկնաբանություններով, որի համար կվարձատրվի:

Շալգիդիկիի մրցաշարը բացառիկ գրոսմայստերական կազմ է նախատեսում: Ահա թե ովքեր են հրավիրվածները.

1. Իվան Սոկոլով - (Հարավս., 2625 միավոր)
2. Վլադիմիր Կրամնիկ - (Մուսասան, 2625)
3. Միխայիլ Ազմաս - (Անգլիա, 2610)
4. Միգուել Իլեսկաս - (Իսպանիա, 2600)
5. Ժոզե Լոպես - (Իսպանիա, 2580)
6. Իգոր Խենկին - (Մուսասան, 2570)
7. Խեսուս Նոգեյրաս - (Կուբա, 2570)
8. Լեւ Պսախիս - (Իսրայել, 2570)
9. Միխայիլ Ուլիբին - (Մուսասան, 2570)
10. Իգոր Բոլոգան - (Մոլդովա, 2555)
12. Վասիլիոս Կոտրոնիաս - (Հուն., 2550)

Ստացված տեղեկության համաձայն, Շալգիդիկիի միջազգային երկրորդ մրցաշարում առաջինից մինչեւ 8-րդ տեղերի համար սահմանվել են համապատասխանաբար 500, 400, 350, 300, 250, 200, 150, 100 հազարական դրախմա դրամական պարգեւներ:

Վլադիմիր Հակոբյանը, որի հետ Շալգիդիկիի պատասխանատուներն անմիջական կապ էին հաստատել դեռ Մանիլայում, որպես մեկնաբան հանդես գալու դեպքում կստանա 230 հազար դրախմա: ■

ՕԼԻՄՊԻԱԴԱ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Թենիս

Տղամարդկանց մենախաղերում պայքարից դուրս են մնացել աշխարհի գրեթե բոլոր ուժեղագույնները: Կիսաեզրափակիչի ուղեգիր են ձեռք բերել Անդրեյ Չերկասովը (ԱՊՀ), Խորդի Արրիսենն (Իսպանիա), Գորան Իվանիշեւիչը (Խորվաթիա) եւ Ռոսսեն (Շվեյցարիա):

Կանանց մենախաղերում պատկերն այլ է: Ասպարեզում մնացածներն անվանի թենիսիստուհիներն են: Կիսաեզրափակիչ են դուրս եկել Շտեֆի Գրաֆը (Գերմանիա), Արանտա Սանչեսը (Իսպանիա), Ջենիֆեր Կապրիատին (ԱՄՆ):

Կանանց զուգախաղերում իրենց հարմար առիթն բռնգե մեդալներ են ապահովել Լեյլի Մեսխին ու Նատալյա Զվերեւան (ԱՊՀ), Ռեյչել Մաքիլլան ու Նիկոլ Պրովիսը (Ավստրալիա), Կոնչիտա Մարտինեսն ու Արանտա Սանչեսը (Իսպանիա): Հորնի համարվում են հաղթողի գլխավոր հավակնորդները եւ Ջիջի Ֆերնանդեսն ու Մերի Ջո Ֆերնանդեսը (ԱՄՆ): ■

Չեմպիոնը գրկվեց

Քենիացի վազորդ Ռիչարդ Չելիմոն 10 հազար մետր մրցումներում հայտարարվեց օլիմպիական չեմպիոն, երբ պարզվեց,որ մեկ վայրկյանով նրան գերազանցած մարոկկացի Խալիդ Սահիը օգնություն է ստացել իր թիմակիցներից: Օլիմպիադաների պատմության մեջ վերջին 84 տարիներին սա առաջին դեպքն է, երբ նման պատճառով որակազրկվում է մարզիկը:

Ուղեծրում Ատլանտան է

Բարսելոնի մրցուղիներում դեռ օլիմպիական թեժ ճարտար են գնում, բայց շատերի հայացքներն արդեն ուղղվում են հաջորդ օլիմպիադայի մայրաքաղաքին Ատլանտային (ԱՄՆ): Ժամանակակից օլիմպիական խաղերի 100-ամյա տարելիցին Ջորջիա նահանգի ու նաեւ, ինչպես ասում են «Կոկա-Կոլայի» մայրաքաղաք Ատլանտայում հաջորդ օլիմպիադայի կազմակերպիչները մտադիր են 1996թ. հուլիսի 20-ից օգոստոսի 4-ը անցկացնել տեխնոլոգիապես գերհագեցած եւ գերճշգրիտ օլիմպիադա՝ «տեխնիցիզմը» զուգորդելով Ամերիկայի հարավին հատուկ հոգու ջերմությամբ:

Ավելորդ չէ նշել, որ Ատլանտան նաեւ «Բարի կամքի» վերջին խաղերի կազմակերպիչ հանրահայտ Թեդ Թըրների «հեռուստատերության» մայրաքաղաքն է: ■

«Հատիս»ը եւ «Ուրարտու»ն պատրաստվում են եւրոպական մրցաշարերին

Գալիք սեպտեմբերին Հայաստանի բասկետբոլային երկու առաջատարները՝ Աբովյանի «Հատիս» կանանց եւ երեւանի «Ուրարտու» տղամարդկանց թիմերն առաջին անգամ կներգրավվեն եւրոպական ակումբային թիմերի պատասխանատու մրցաշարերին:

Երկու թիմերն էլ պայքարն սկսելու են ընտրական փուլերից, սակայն եւրոպական Ֆեդերացիան, հաշվի առնելով «Հատիս»ի հեղինակությունն ու կարգը, նրան ազատել է առաջին փուլի խաղերից: Մեր թիմն ասպարեզ կմտնի 2-րդ փուլից:

Ըստ վիճակահանության, «Ռոնկետտի»ի գավաթի խաղարկությունում «Հատիս»ի առաջին մրցակիցը կլինի Բելգիայի Վարեգեմ քաղաքի «Մինի Ֆլաս Դամ» թիմը:

Առաջին հանդիպումը սեպտեմբերի 30-ին կկայանա Երեւանում: Պատասխան խաղը հոկտեմբերի 7-ին կանցկացվի Վարեգեմում:

«Ուրարտու»ն հանդես կգա «Կորաչի» գավաթի խաղարկությունում: Առաջին փուլում մեր թիմի մրցակիցը կլինի Բուլղարիայի Պլեւեն քաղաքի «Սպարտակ»ը: Բուլղարացիները հեռագրով ցանկություն հայտնեցին 2 հանդիպումներն էլ անցկացնել սեփական հարկի տակ, սակայն ինչպես եւ նախատեսված էր վիճակահանությամբ, առաջին խաղը սեպտեմբերի 9-ին տեղի է ունենալու Երեւանի «Դինամո» մարզադաշտում: Պատասխան խաղը Պլեւենում կկայանա սեպտեմբերի 16-ին:

Երկու հանդիպումների արդյունքներով հաղթողները դուրս կգան հաջորդ փուլ:

Սեպտեմբերի 10-ից Իրանում սկսվելու են հանրահայկական Նավասարդյան 25-րդ խաղերը, որին հրավիրված է նաեւ բասկետբոլի 33 տղամարդկանց հավաքականը: Բայց քանի որ ժամկետները համընկնում են եւրոպայի ակումբային մրցաշարերին, Իրան կմեկնի մեր հանրապետության երկրորդ հավաքականը:

Վերջինս կազմավորելու համար Արթիկում մրցաշար կազմակերպվեց 4 թիմերի մասնակցությամբ:

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մրցաշարի արդյունքները:

	Խ	Հ	Պ	Ս
1. Ք. Արթիկի	3	3	0	6
2. «Պոլիտեխնիկ» (Եր.)	3	2	1	5
3. «Արագած» (Գյումրի)	3	1	2	4
4. «Ուրարտու» (Դաս.)	3	0	3	3

Աղասին իրականացնում է իր երազանքները

Անդրե Աղասին իրականացրեց մի մեծ երազանք, նվաճելով Ուիմբլդոնի առաջնությունը: Իսկ հիմա փափագում է մարմնավորել իր մեծագույն երազանքը՝ ամուսնանալ իր պատանեկության սիրո՝ Ուինդի Ստյուարտի հետ: Աղջիկները ընկնում են Աղասու ոտքերը, բայց նա որեւէ ուշադրություն չի դարձնում նրանց, քանզի նրա սիրտն ամբողջովին, ինչպես ինքն է ասում, պատկանում է այն աղջկան, որի հետ նրա կապն ունի 15 տարվա վաղեմություն եւ որին նա ճանաչում է դեռեւս յոթ տարեկան հասակից: *«Այդ կապը, որը վերածվեց մեծ սիրո,* ավելացնում է Աղասին, *ինձ համար ավելի կարեւոր է, քան թենիսի եւ առաջնությանց ավտոմեքենաների նկատմամբ ունեցածս սերը»:*

Անդրեն Իրանից գաղթած հայի էնդուել Աղասյանի զավակն է, որը նույնպես մարզիկ էր եւ Իրանի թիմի կազմում մասնակցել էր 1952 թ. օլիմպիական խաղերին, որպես բռնցքամարտիկ: Այնուհետեւ արտագաղթել է Չիկագո, որտեղ նրա անունը դարձավ Մայք Աղասի: Եւ հենց ինքը Մայքն էր, որ իր որդուն մտցրեց թենիսի աշխարհ, երբ նա դեռ երեխա էր: Իր զրահողությունների գնով նա որդու համար ապահովեց մարզանքի լավագույն հնարավորություններ: ■

Բոլոր լուսանկարները՝ Սուրեն ԲԱԴԱԼՅԱՆԻ

digitised by A.R.A.R.@

Ռաֆֆի Հովհաննիսյանի Հունգարիա կատարած այցելության որոշ մեկնաբանություններ

«Ազատություն» ռադիոկայանի ռուսական ծառայությունը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության արտգործնախարարի Հունգարիա կատարած այցելությանը, Բուդապեշտից հաղորդեց հետևյալը. *«Հունգարիայի հասարակայնությունը բացառիկ հնարավորություն ունեցավ ունկնդրելու եւ համեմատելու դաշտերազմական վիճակի մեջ գտնվող երկու երկրների դաշտոնական ներկայացուցիչներին՝ Հարավսլավիայի վարչապետ Պանիչին եւ Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանին, ամերիկյան հոլանակություն ունեցող երկու գործիչներ, որոնք ծառայում են դժվար կացության մեջ հայտնված իրենց հայրենիքներին: Սակայն, նրանց միջև ընդհանրությունը սահմանափակվում էր անգլերենի փայլուն իմացությամբ, մնացյալում նրանք խիստ տարբեր էին: Այսպես, եթե Հարավսլավիայի վարչապետն անառարկայական շատախոսության մեծ սիրահար էր, ապա Հայաստանի նախարարը զուրկ էր արեւելյան դերձախոսությունից եւ ավելի շատ հակված էր կոնկրետ հարցերի արդյունավետ քննարկմանը: Բանակցությունների վերջում նա գոհունակություն հայտնեց աշխատանքների կոնկրետության առթիվ եւ նշեց, որ Հայաստանն ու Հունգարիան ընդհանուր մոտեցում ունեն հարեւան երկրներում հոծ բնակվող իրենց հայրենակիցների առջև ծառացած խնդիրների վերաբերյալ: Նա նշեց նաեւ, որ կողմերն ընդհանուր տեսակետներ են արտահայտել Հարավսլավիայի եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների առնչությամբ, սակայն փակագծերը մնացին չբացված: Պատասխանելով «Նեզավիսիմայա գազետա» անկախ թերթի հարցերին, նա ասաց, թե Հայաստանն անում է ամեն ինչ Լեռնային Ղարաբաղում դաշտերազմը դադարեցնելու ուղղությամբ, սակայն Ադրբեջանը չի ընդառաջում այս հարցում եւ շարունակում է ուժի գործադրումը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ուստի, գտնում է նախարարը, միջազգային հանրությունը պետք է ճնշում գործադրի Ադրբեջանի նկատմամբ, իսկ եթե դա չօգնի, ապա պետք է դիմել դաշտաժամիջոցների: Եթե դաշտաժամիջոցների կիրառումը եւս չփոխի իրավիճակը, ապա կարծում ենք, որ մենք բոլորս ստիպված կլինենք ճանաչել Լեռնային Ղարաբաղ պետությունը: Պարոն Հովհաննիսյանը նշեց նաեւ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտություն չկա ոչ կրոնական եւ ոչ էլ այլ հողի վրա, առավել եւս՝ Հայաստանը տարածքային ձեռքբերումների մտադրություն չունի: Հակամարտությունը տեղ ունի միայն Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ:*

Կարծում ենք, անչափ հետաքրքիր էր եւ անհրաժեշտ իմանալ ներկա փուլում Հայաստանի իշխանությունների տեսակետները Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի նկատմամբ»:

Մեզ մնում է միայն ընթերցողին հիշեցնել, որ Հունգարիան ազգային փոքրամասնության խնդիր ունի ռումինական Տրանսիլվանիայում, որը հիմնականում բնակեցված է հունգարացիներով: Հունգարիան կայուն դիրքորոշում ունի Ռումինիայում հունգարական փոքրամասնության լեզվամշակութային ինքնավարության աղտահովման հարցում:

Այս առումով ավելի քան հասկանալի են Հայաստանի եւ Հունգարիայի ընդհանուր տեսակետները Լեռնային Ղարաբաղի հայության եւ Տրանսիլվանիայի հունգարացիների աղագայի հարցերում: Սա մեկ անգամ եւս ցույց է տալիս, որ լեզվամշակութային ինքնավարության տարբերակը շարունակում է մնալ ԼՂՀ-ի խնդրում Հայաստանի քաղաքականության անկյունաքարը, եւ այս տեսանկյունից կարելի է հասկանալ, թե ինչո՞ւ անհրաժեշտ ծավալով աշխատանքներ չեն կատարվում ԼՂՀ-ի ինքնիշխանությունն աղահովելու համար:

Տ. Հ.

ԱՄՆ դեսպանատունը բացվեց, սակայն... դռները մնացին փակ

Օգոստոսի 4-ին Երեւանում հանդիսավորությամբ բացվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան նոր շենքը (նախկին կոմերիտմիության կենտկոմը, իսկ հետո նաեւ շատերի նստավայրը): Երկրորդ հարկի պատշգամբում բարձրացվեց ԱՄՆ-ի դրոշը, եւ Հայաստանում ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար Թոմ Քրայսի ելույթից հետո, ներկաներին հրավիրեցին ներս: Սակայն նախարարներին ու պաշտոնական անձանց ներս թողնելուց հետո դռան մոտ կանգնած անվտանգության աշխատակիցները լրագրողներին արգելեցին ներս մտնել, ասելով, թե թույլատրվում է միայն հրավիրվածներին: Պարզվում է, որ ամերիկացիները խստականություն են դնում նաեւ հրավիրվածների մեջ: Մնում է միայն հարց տալ դեսպանատան հարգելի աշխատակիցներին. ինչո՞ւ էիք հրավիրել լրագրողներին, եթե պետք է արգելեիք ներս մտնել: ■

ՄԻՀԱՅԵԼ ՍԱՐԻԿՅԱՆ

ՍՊՀ-ը կհավաքի մոտ 170 միլիոն տոննա հացահատիկ

Ինչպես սպասվում է, այս տարի Հանրակցության պետությունները կարող են հավաքել մոտ 170 միլիոն տոննա հացահատիկ: Անցյալ տարի հավաքվել էր 155 միլիոն տոննա: Գործնականապես բերքի ամբողջ «հավելումը» կտա Ղազախստանը, որտեղ նախատեսվում է հավաքել 27-29 միլիոն տոննա՝ անցյալ տարի հավաքված 12 միլիոն տոննայի դիմաց: Ըստ կանխատեսումների, Ռուսաստանը եւ Ուկրաինան կստանան այնքան հացահատիկ, ինչքան անցյալ տարի, որը չավազանց անբարենպաստ էր գյուղատնտեսության համար. Ուկրաինան՝ 37-39 միլիոն տոննա, Ռուսաստանը՝ 90-93 միլիոն տոննա: Իսկ Բելառուսում սպասվում է ավելի ցածր բերք, քան անցյալ տարի՝ 4-5 միլիոն տոննա՝ 6,3 միլիոն տոննայի փոխարեն:

ԱՊՀ-ի վիճակագրության կոմիտեի օպերատիվ լրատվության համաձայն, գրեթե բոլոր հանրապետություններում բերքահավաքն ընթանում է ուշացումով: Օգոստոսի 3-ի դրությամբ հավաքվել է 34 միլիոն տոննա հացահատիկ, որը 2 անգամ հիշ է անցյալ տարի հավաքվածից: ■

ՈՒՂՂՈՒՄ

Մեր թերթի նախորդ՝ օգոստոսի 4-ի համարում, 3-րդ էջում տպագրված ***«Չկա՛ անիբնանություն, կա՛ բանի իբանություն, կամ սայլը ձոռալու փոխարեն՝ սելվորն է ձոռում...»*** հրապարակման մեջ 3-րդ այուսի ներքեւից 24-րդ տողից սկսած արբագրիչի մեղքով թույլ է տրվել կողմից սխալ. ***«...մենք էլ հո հասել է հարեւան Արթիկի շրջանում ապրող Ապարանի շրջխորհրդի նախագահի հոջ ամուսնո՞ւն...»***... պետք է կարդալ. ***«... հարեւան Արթիկի շրջանում ապրող Աշտարակի շրջխորհրդի նախագահի հոջ ամուսնո՞ւն...»:***

Ռուսաստանի գաղութներում կես միլիոն դատապարտյալ

Ներկա պահին Ռուսաստանի ազատազրկման վայրերում գտնվում են մոտ 544 հազար մարդ, այդ թվում 18,4 հազար կին, 20,4 հազար անչափահաս: Այդ մասին հաղորդեցին օգոստոսի 4-ին Ռուսաստանի ՆԳՆ-ում կայացած բրիֆինգում: Ինչպես նշվեց, այս տարվա հունվար-հուլիս ամիսների ընթացքում ուղղիչ աշխատանքային գաղութներում պահակախմբերի ջանքերով կանխվել է 83 փախուստի դեպք, գտնվել են 139 փախած դատապարտյալ:

Ուղղիչ-աշխատանքային հիմնարկների համակարգում գործում է ավելի քան 800 արդյունաբերական, 30 գյուղատնտեսական, 10 փայտամշակման եւ փայտամշակման ձեռնարկություն: Դատապարտյալների աշխատավարձը կազմում է 1500-1800 ռուբլի: ■

Տաշքենդում՝ խոլերա

Տաշքենդում արձանագրվել է խոլերա հիվանդության երկու դեպք՝ 8-ամյա մի երեխա եւ հընդկատանցի մի զբոսաշրջիկ: Երկուսին էլ հաջողվել է փրկել: ■

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ
DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շյեդրինի փ. 54ա, հեռ. 3-60-72
Գորիս, Սաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87
Ստեփանակերտ, Մարտի փ. 6, հեռ. 4-10-06

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

- Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:
- Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:
- Միայն մեզ դում կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»-ն ոչ միայն միջազգային ստանդարտներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:
- Միայն մեզ մոտ դում կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տվող բուժօգնության ծավալից եւ տեսակից:
- Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8:30-ից մինչեւ 19:00, շաբաթ օրը՝ մինչեւ 15:00:

Պարեցային ժամը չեղյալ է հայտարարվել Թբիլիսիում

Ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին իրազեկ աղբյուրներից, Վրաստանի Պետխորհուրդը օգոստոսի 3-ին կայացած փակ նիստում որոշում ընդունեց, որի համաձայն օգոստոսի 4-ից չեղյալ է հայտարարվել արտակարգ իրավիճակը եւ պարեցային ժամը, ինչպես նաեւ քրեական պատասխանատվությունից ազատվել են այս տարի հունվարի 6-ին իշխանությունների դեմ գործողությունների համար ձերբակալված բոլոր անձինք: Նույն աղբյուրների տվյալների համաձայն, ազատ կարձակվեն նաեւ Զ. Գամսախուրդիայի կողմնակիցները, որոնք հունիսի 24-ին խռովության փորձ էին ձեռնարկել, գրավելով հեռուստաընդարատեսի շենքը եւ հեռուստաբեռակը: Նրանց մեջ է Զուգդիդի քաղաքի անհնազանդության կոմիտեի նախագահ, նախկին նախագահի ամենամտերիմ կողմնակիցներից մեկը՝ Վալտեր Շարգայան:

Ազատ կարձակվեն հունվարին ձերբակալված նախկին Ֆինանսների նախարար Գուրամ Աբսանձեն եւ խորհրդարանի էկոնոմիկայի ու Ֆինանսների հանձնաժողովի նախագահ Տարիել Գելանդիան: Նրանք մեղադրվում էին պետական գանձարանից 40 միլիոն ռուբլու հափշտակման մեջ:

Պետխորհուրդը որոշեց նաեւ արգելել բոլոր քաղաքական ուժերի գործունեությունը, որոնք կողահդանեն իրենց զինված ջոկատները: Բոլոր զինված կազմավորումները պետք է մտնեն միացյալ զինված ուժերի կամ ներքին զորքերի մեջ եւ վերադառնան մշտական տեղակայման վայրերը:

Օգոստոսի 5-ի դրությամբ արդեն ազատ են արձակվել Վրաստանի նախկին նախագահի 56 կողմնակիցներ: Նրանց թվում են վերոհիշյալ Վալտեր Շարգայան եւ Գուրամ Աբսանձեն: Ինչպես հաղորդեց Մոսկվայում Վրաստանի մշտական ներկայացուցչության մամուլի կենտրոնը, ազատ են արձակվել նաեւ Գերազույն խորհրդի հանձնաժողովների նախագահներ Տարիել Գելանդիան, Նուգզար Մոլոդինաշվիլին, Ավիտո Ռցխիլաձեն: Բացի այդ, չեղյալ է հայտարարվել մի շարք անձանց որոնումը:

Միեւնույն ժամանակ, ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին, մոտ ժամանակներս ազատ կարձակվի հուլիսի 9-ին պատանդ վերցված Վրաստանի փոխվարչապետ Ալեքսանդր Կավսաձեն: ■

Լուրերի Դոմ

Ինչ զենք, ինչ բան

Անդրկովկասի զինվորական օկրուգի լրատվության վարչության պետ, գնդապետ Վասիլի Բելչենկոն հերքեց այն հաղորդագրությունը, թե օկրուգի հրամանատարությունը Վրաստանին է հանձնել սպառազինություն եւ ռազմական տեխնիկա: Նախօրեին Վրաստանի Պետխորհրդի քարտուղար Վախթանգ Գոգուաձեն Վրաստանի հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել էր, որ Անդրկովկասի զինվորական օկրուգը Վրաստանին է հանձնել մեծ քանակությամբ տանկեր, ծանր հրետանի եւ այլ տեսակի սպառազինություն: «ԻՖ»-ին տված հարցազրույցում Վ. Բելչենկոն նշեց, որ հարցը գտնվում է *«գործնական ուսումնասիրության փուլում, սակայն զենքի հանձնման ոչ մի փաստ դեռ չի արձանագրվել»:* ■

1 դոլլարը՝ 161,4 ռուբլի

Մոսկովյան միջբանկային վալյուտային բորսայում օգոստոսի 4-ին կայացած հերթական սակարկության ժամանակ դոլլարի կուրսը կազմեց 161,4 ռուբլի՝ 1 դոլլարի դիմաց: Վաճառվել է 20,99 միլիոն դոլլար:

Հուլիսի 30-ին կայացած նախորդ սակարկության ժամանակ դոլլարի կուրսը կազմել էր 161,2 ռուբլի՝ 1 դոլլարի դիմաց. վաճառվել էր 23,13 միլիոն դոլլար: ■

Մոլդովայի պարտքը՝ 9 միլիարդ

Հուլիսի 1-ի դրությամբ Մոլդովայի պարտքը Ռուսաստանին կազմում է 5 միլիարդ ռուբլի, իսկ ռուբլու գոտու երկրներին չվճարված գումարը՝ 9 միլիարդ ռուբլի: Այդպիսի տվյալներ բերեց Ֆինանսների նախարարի պաշտոնին հավակնող Կլավդիա Մելնիկը, որն իր ծրագիրն էր ներկայացնում խորհրդարանում: Նրա խոսքերով, հանրապետության ներսում չվճարված գումարը կազմում է 30 միլիարդ ռուբլի: Կ. Մելնիկը հաղորդեց նաեւ, որ որոշ հանրապետությունների հետ Մոլդովան ունի դրական հաշվեկշիռ, օրինակ՝ Թուրքմենստանի եւ Ղազախստանի հետ: ■

Կեղծ կուպոններ

Ուկրաինայի ՆԳՆ հասարակական կարգի կենտրոնի հաղորդագրության համաձայն, օգոստոսի 1-ի դրությամբ հանրապետությունում շրջանառությունից հանվել են 81 հազար կեղծ կուպոններ 100 ռուբլի անվանական գնով, եւ 445 1000 ռուբլի անվանական գնով: Ձերբակալվել է 6 մարդ, այդ թվում՝ Բելառուսի 3 քաղաքացի: ■

«Տավրիան» 350 հազ. ռուբլի

Ջաղորոժիեի ավտոգործարանում արտադրվող «Տավրիա» մակնիշի ավտոմոբիլն այժմ արժե 350 հազար ռուբլի, իսկ ՋԱԶ-968-ը՝ 138 հազար: Ինչպես հաղորդեց «Խարկով-Նորություններ» լրատվական գործակալությունը, Սոֆիայում վերջերս կայացած մեքենաների տոնավաճառում «Տավրիան» վաճառվում էր 3223 դոլլարով: ■

Լուրերը՝ interfax-ի, «Մարտի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրեն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 Կոզե տ
Editor H. AVEDIKIAN
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2
Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրված է տպագրության 5.08.1992
Դասիչ 69149
Պատուէր 1522

digitised by A.R.A.R.@